

H. USULI









Պրովետարներ քուր յերկրների, միացե՛ք



# Ի. ՍՏԱԼԻՆ

9(4)2  
Ա 85

ՍՏՈՒԳՎԱՆ Է 1961 թ.

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ  
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1927 թ. սեպտեմբերի 9-ին



ՊԵՏԶՐԱՏ —

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ ● 1938


4605

А Т  
1024

И. СТАЛИН  
БЕСЕДА С ПЕРВОЙ  
АМЕРИКАНСКОЙ РАБОЧЕЙ  
ДЕЛЕГАЦИЕЙ

Госиздат—Отдел парт.-полит.  
литературы

Ереван, 1938





**ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿԱՆ ԱՌԱՋԻՆ  
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒ-  
ԹՅԱՆ ՀԵՏ**

1927 թ. սեպտեմբերի 9-ին

**I**

**ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ  
ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ**

1-ին ՀԱՐՑ: Լենինը և կոմկուսակ-  
ցությունը գործնականապես ի՞նչ նոր  
ակգրումներ են ավելացրել մարքսիզ-  
մին: Ճիշտ կլինե՞ր արդյո՞ք ասել, թե  
Լենինը հավատում էր «տեղծագործա-  
կան հեղափոխությանը», մինչդեռ  
Մարքսն ավելի հակամետ էր սպասե-  
լու տնտեսական ուժերի գազաթնակե-  
տային զարգացմանը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Յես կարծում եմ, վար

Լենինը վոչ մի «նոր սկզբունք» չի «ա-  
վելացրել» մարքսիզմին, ինչպես վոր  
Լենինը չի վերացրել մարքսիզմի «հին»  
սկզբունքներէց վոչ մեկը: Լենինը յե-  
ղեւ եւ ն մնում ե Մարքսի ու Ենգելսի  
ամենահավատարիմ ու հետևողական  
աշակերար, վորն ամբողջապես ու լի-  
ովին հենվում ե մարքսիզմի սկզբունք-  
ների վրա: Բայց Լենինը Մարքսի—Են-  
գելսի ուսմունքի միմիայն կատարու-  
ղէր: Նա դրա հետ մեկտեղ Մարքսի ու  
Ենգելսի ուսմունքի շարունակողն եր:  
Ի՞նչ ե նշանակում այս: Այս նշանակում  
ե, վոր նա սովելի զարգացրեց Մարքսի—  
Ենգելսի ուսմունքը՝ զարգացման նոր  
սլայմաններին համապատասխան, կապի-  
տալիզմի նոր վուլին համապատասխան,  
իմպերիալիզմին համապատասխան կեր-  
պով: Այս նշանակում ե, վոր դաս-  
կարգային կռիւի նոր սլայմաններում ա-  
վելի զարգացնելով Մարքսի ուսմունքը՝  
Լենինը մարքսիզմի ընդհանուր դանձա-  
րանը մտցրեց ինչ—վոր նոր բան՝ հա-



մեմատած այն բանի հետ, ինչ վոր Մարքսն ու Ենդելսն եյին տվել, համեմատած այն բանի հետ, ինչ կարող եր տրվել մինչ-իմպերիալիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում, ընդհարում այդ նորը, վոր Լենինը մտցրել է մարքսիզմի գանձարանը, ամբողջապես ու լիովին խարսխված է Մարքսի ու Ենդելսի տված սկզբունքների վրա: Հենց այս իմաստով է, վոր մեզանում խոսվում է Լենինիզմի՝ վորպես իմպերիալիզմի ու սրբետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմի մասին: Ահա մի քանի հարցեր, վորոնց բնագավառում Լենինը նոր բան է տվել՝ ավելի դարգացնելով Մարքսի ուսմունքը:

Նախ՝ մոնոպոլիստական կապիտալիզմի հարցը, իմպերիալիզմի՝ վորպես կապիտալիզմի նոր փուլի՝ հարցը: Մարքսն ու Ենդելսը «կապիտալում» տվել են կապիտալիզմի հիմունքների վերլուծությունը: Բայց Մարքսն ու

Ենդեւսն ապրում եյին մինչմոնոպոլիս-  
տական կապիտալիզմի տիրապետու-  
թյան ժամանակաշրջանում, կապիտա-  
լիզմի սահուն եվոլուցիա կատարելու  
և ամբողջ յերկրագնդի վրա նրա «խա-  
ղաղ» տարածման ժամանակաշրջանում :  
Այդ հին փուլն ավարտուեց XIX դարի  
վերջին և XX-ի սկզբին, յերբ Մարքսն  
ու Ենդեւսն արդեն կենդանի չեյին :  
Հասկանալի յե, վոր Մարքսն ու Ենդեւ-  
սը կարող եյին լոկ կռահել կապիտա-  
լիզմի զարգացման այն նոր սլայմաննե-  
րի մասին, վորոնք վրա հասան կապի-  
տալիզմի հին փուլին հաջորդելու յե-  
կած նոր փուլի կապակցութեամբ, զար-  
գացման խմբերիալիստական, մոնոպո-  
լիստական փուլի կապակցութեամբ,  
յերբ կապիտալիզմի սահուն եվոլուցիա  
կատարելուն փոխարինեց կապիտալիզմի  
թռիչքածև, կատարատրոֆիկ զարգացու-  
մը, յերբ զարգացման անհավասարա-  
չափությունն ու կապիտալիզմի հակա-  
սությունները հանդես յեկան առանձին

ուժգնութեամբ, յերբ վաճառահանման  
չուկաների ու կապիտալի արտահանման  
համար մղվող պայքարը զարգացման  
ծայրահեղ անհավասարաչափութեան  
պայմաններում անխուսափելի դարձրեց  
իմպերիալիստական պարբերական պա-  
տերազմներն աշխարհի ու ազդեցութեան  
վերլուծների պարբերական վերաբաժա-  
նումների համար: Լենինի մատուցած  
ծառայութիւնը և, հետևապես, Լենինի  
մոտ նորն այստեղ այն և, վոր նա,  
հենվելով «կապիտալի» հիմնական  
զրույթների վրա, ասեց իմպերիալիզ-  
մի՝ վորպէս կապիտալիզմի վերջին  
փուլի՝ հիմնավորված մարքսիստական  
վերլուծութիւնը, բաց անելով նրա  
խոցերն ու նրա անխուսափելի կործան-  
ման պայմանները: Այս վերլուծութեան  
բաղալի վրա ծաղեց Լենինի հայտնի  
զրույթն այն մասին, վոր իմպերիալիզ-  
մի պայմաններում հնարավոր և սոցիա-  
լիզմի հաղթութիւնը առանձին, ջոկ

վերցրած կապիտալիստական յերկրնե-  
րում :

Յերկրորդ, պրոլետարիատի դիկտա-  
տուրայի հարցը : Պրոլետարիատի դիկ-  
տատուրայի՝ վորպես պրոլետարիատի  
քաղաքական տիրապետության և վոր-  
պես կապիտալի իշխանությունը բռնու-  
թյան միջոցով տապալելու մեթոդի՝  
հիմնական դադափարը ամէլ էն Մարքսն  
ու Ենգելսը : Լենինի մոտ նորն այս  
բնագափառում այն է, վոր ա) նա  
հայտնադործեց խորհրդային իշխանու-  
թյունը վորպես պրոլետարիատի դիկ-  
տատուրայի պետական ձև՝ դրա համար  
ողտադործելով Փարիզի կոմունայի և  
ուսուսական հեղափոխության փորձը .  
բ) պրոլետարիատի դիկտատուրայի  
դաշնակիցները պրոբլեմի տեսանկյու-  
նով նա բացեց պրոլետարիատի դիկտա-  
տուրայի Ֆորմուլայի փակագծերը,  
պրոլետարիատի՝ դիկտատուրան բնորո-  
շելով վորպես դեկավար հանդիսացուլ  
պրոլետարիատի դասակարգային դա-

չինքի հասուկ ձև վոչ-պրուկտարական  
դասակարգերի (գյուղացիութեան և  
այլ) շահագործվող մասսաների հետ,  
վորոնք ղեկավարվող են հանդիսանում.  
Կ՝ նա առանձին ուժով ընդդէսց աշն  
փաստը, վոր դասակարգային հասարա-  
կութեան պայմաններում պրուկտարիա-  
տի գիկտատուրան գեմոկրատիայի ա-  
մենարարձր տիպն է, պրուկտարական  
գեմոկրատիայի ձևը, վորն արտահայ-  
տում է մեծամասնութեան (շահագործ-  
վողների) շահերը,—ի հակակշիռ կապի-  
տալիստական գեմոկրատիայի, վորն  
արտահայտում է փոքրամասնութեան  
(շահագործողների) շահերը:

Յերբորդ, սոցիալիզմի հաջող կա-  
սուցման ձևերի ու յեղանակների հար-  
ցը պրուկտարիատի գիկտատուրայի ժա-  
մանակաշրջանում, կապիտալիզմից գե-  
պի սոցիալիզմ ձգվող անցողիկ ժա-  
մանակաշրջանում, մի յերկրում, վոր  
չըջապատված է կապիտալիստական պե-  
տություններով: Մարքսն ու Ենդելսը

դիտում եյին պրոլետարիատի դիկտա-  
տուրայի ժամանակաշրջանը վորպես  
այլելի կամ սրահաս յերկարատե մի ժա-  
մանակաշրջան, վորը լի յե հեղափոխա-  
կան դռեմարտերով ու քաղաքացիա-  
կան պատերազմներով, վորի տեսչու-  
թյան ընթացքում պրոլետարիատը, իշ-  
խանության գլուխ կանգնած լինելով,  
ձեռք ե ասնում տնտեսական, քաղաքա-  
կան, կուլտուրական ու կազմակերպա-  
կան ընույթի միջոցներ, վորոնք ան-  
հրաժեշտ են հին կապիտալիստական  
հասարակության փոխարեն նոր սոցիա-  
լիստական հասարակություն, առանց  
դասակարգերի հասարակություն, ա-  
ռանց պետության հասարակություն  
ստեղծելու համար: Լենինն ամբողջա-  
պես ու լիովին կանգնած եր Մարքսի ու  
Ենգելսի այս հիմնական գրույթների  
հողի վրա: Լենինի մոտ այս ընդգա-  
վառում նորն այն ե, վոր ա) նա հիմ-  
նավորեց լիակատար սոցիալիստական  
հասարակության կառուցման հնարավո-

թուօթյունն իմպերիալիստական պետնէ-  
թյուններով շրջապատված՝ պրոլետա-  
րիատի դիկտատուրայի յերկրում, պայ-  
մանով, Վոբ այդ յերկիրը Հիսկիւլի  
շրջապատող կապիտալիստական պետու-  
թյուններէ ոսղմական ինտերվենցիայի  
կողմից. բ) նա ուրվագծեց տնտեսական  
քաղաքականութեան կոնկրետ ուղիները  
(«նոր տնտեսական քաղաքականու-  
թյուն»), վորոնց ուղեւթյամբ պրոլե-  
տարիատը, իր ձեռքին ունենալով տըն-  
տեսական իշխող բարձունքները (ար-  
դյունարեքությունը, հողը, տրանսպոր-  
տը, բանկերը և այլն)՝ սոցիալիզացիա-  
յի յենթարկած ինդուստրիան զոդում և  
դյուզատնտեսութեան հետ («ինդուս-  
տրիայի զոդումը դյուզացիական տըն-  
տեսութեան հետ») և այդպիսով ամ-  
բողջ ժողովրդական տնտեսությունը  
տանում է դեպի սոցիալիզմ. գ) նա  
ուրվագծեց դյուզացիութեան հիմնական  
մասսաներին կոոպերացիայի միջոցով  
աստիճանաբար մոտեցնելու և սոցիա-

լիտտական շինարարութեան հունի մեջ  
հերզերալեւու հանկրեա ուղինները,  
կոսպերացիայի միջոցով, վարը ներկա-  
յացնում ե գյուղացիական մանր տնտե-  
սութեան վերակերտման ու գյուղացիու-  
թեան հիմնական մասսաներին սոցիա-  
լիզմի մոզով վերադաստիարակելու մե-  
ծադույն մի միջոց պրոլետարիատի  
դիկտատուրայի ձեռքին:

Չորրորդ, պրոլետարիատի հեղեմո-  
նիայի հարցը՝ հեղափոխութեան, ամեն  
մի ժողովրդական հեղափոխութեան  
մեջ, ինչպէս ցարիզմի դեմ ուղղված  
հեղափոխութեան, այնպէս եւ կապի-  
տալիզմի դեմ ուղղված հեղափոխու-  
թեան մեջ: Մարքսն ու Ենդելսը տվել  
են պրոլետարիատի հեղեմոնիայի դա-  
դափարի հիմնական ուրվադժերը: Լե-  
նինի մտտ այստեղ նորն այն ե, վոր  
նա ավելի դարգացրեց ու ծալալեց այդ  
ուրվադժերը՝ դրանք վերածելով պրո-  
լետարիատի հեղեմոնիայի բարեկերտ  
մի սխաեմի, քաղաքի ու գյուղի աշ-



խատալոր մասսաներին վո՛չ միայն  
ցարիզմի ու կապիտալիզմի տապալման  
գործում, այլև սրբուկտարիատի դիկ-  
տատուրայի սրով սոցիալիստական շի-  
նարարութեան գործում սրբուկտարիատի  
կողմից ղեկավարելու բարեկերտ սիս-  
տեմի: Հայտնի յե, վոր սրբուկտարիա-  
տի հեղեմոնիայի գաղափարը Լենինի  
ու նրա կուսակցութեան շնորհիվ վար-  
սեալին կիրառում գտալ Ռուսաստա-  
նում: Ի միջի այլոց սրանով ե բացա-  
տրվում այն վաստը, վոր հեղափոխու-  
թյունը Ռուսաստանում հանգեցրեց  
սրբուկտարիատի իշխանութեանը: Առաջ-  
ներում սովորաբար բանն այնպես եր  
աւելի ունենում, վոր հեղափոխութեան  
ժամանակ բարիկաղների վրա կալում  
եյին բանվորները, նրանք արյուն եյին  
թափում, նրանք տապալում եյին հի-  
նը, իսկ իշխանութեանն ընկնում եր  
բուրժուակաների ձեռքը, վորոնք հետո  
ձնչում ու շահագործում եյին բան-  
վորներին: Բանն այսպես ե յե-

դէլ Անգլիայում ու Ֆրանսիայում :  
 Բանն այսպէս և յեղէլ Գերմանիայում :  
 Մեղանում, Ռուսաստանում, բանն ու-  
 րիշ ընթացք ստացավ : Մեղանում բան-  
 վորները հեղափոխութեան հարվածային  
 ուժը չեյին միայն : Լինելով հեղափո-  
 խութեան հարվածային ուժը՝ ոուսա-  
 կան պրոլետարիատը դրա հետ մեկտեղ  
 ջանում եր լինել քաղաքի ու գյուղի՝  
 բոլոր շահագործվով մասսաների հեզե-  
 մոնը, քաղաքական ղեկավարը՝ նրանց  
 իր շուրջը համախմբելով, նրանց բուր-  
 ժուազիայից պոկելով, քաղաքականա-  
 պէս մեկուսացնելով բուրժուազիային :  
 Իսկ շահագործվող մասսաների հեզե-  
 մոնը լինելով՝ ոուսական պրոլետա-  
 րիատն ամբողջ ժամանակ պայքարում  
 եր հանուն այն բանի, վոր իշխանու-  
 թյունն իր ձեռքը գցի և այն ոգտա-  
 դործի իր սեփական շահերի համար՝  
 բուրժուազիայի դեմ, կապիտալիզմի  
 դեմ : Իսկապէս սրանով ել բացատրը-  
 վում և այն, վոր հեղափոխութեան

յուրաքանչյուր հուշակու յելույթը Ռուս-  
սաստանում, ինչպես 1905 թվականի  
հոկտեմբերին, այնպես եւ 1917 թվա-  
կանի փետրվարին, ասպարեզ եր մղում  
բանվորական պատգամավորների խոր-  
հուրդները, վորպես իշխանության նոր  
ասպարատի սաղմեր,—ասլարատ, վորը  
կոչված է ճնշելու բուրժուազիային,—ի  
հակահշիռ բուրժուական պառլամենտի,  
վորպես իշխանության հին ասլարատի,  
վորը կոչված է ճնշելու պրոլետարիա-  
տին: Բուրժուազիան մեղանում յերկու  
անգամ փորձել է վերականգնել բուր-  
ժուական պառլամենտը և վերջ դնել  
խորհուրդներին—1917 թ. ոգոստոսին,  
«Նախապառլամենտի» ժամանակ, մինչև  
բուլևերիկների կողմից իշխանությունը  
վերցնելը, և 1918 թ. հունվարին,  
«Սահմանադիր ժողովի» ժամանակ,  
իշխանությունը պրոլետարիատի կող-  
մից վերցվելուց հետո,—ու ամեն ան-  
գամ պարտություն է կրել: Ինչո՞ւ:  
Վորովհետև բուրժուազիան արդեն քա-

դիւքսիաննապես մեկուսացլած եր, աշխատալորնեբի միլիոնալոր մասսաները պրոլետարիատին եյին համարում հեղափոխության միակ առաջնորդը, իսկ մասսաներն արդեն ստուգել ու վորձել եյին խորհուրդները, վորպես իրենց բանվորական իշխանությունը, վորին բուրժուական պառլամենտի հետ վորջելը պրոլետարիատի համար ինքնասպանություն կլիներ: Ուստի զարմանալի է, վոր բուրժուական պառլամենտարիդը մեզ մոտ չսլատվաստվեց: Ահա թե ինչու հեղափոխությունը Ռուսաստանում հասցրեց պրոլետարիատի իշխանությանը: Սրանք են հեղափոխության մեջ պրոլետարիատի հեզմոնիայի լենինյան սխտեմը կենսագործելու արդյունքները:

Հինգերորդ, ազգային-գաղութային հարցը: Մարքսն ու Ենգելսը, իր ժամանակին վերլուծելով Իռլանդիայում, Հնդկաստանում, Չինաստանում, Կենտրոնական Յեվրոպայի յերկրներում,

Լեհաստանում, Հունդարիայում և անհի-  
ունեցող անցքերը, — տվին ազգային-գա-  
ղութային հարցի հիմնական, մեկնակե-  
տային գաղափարները: Լենինն իր աշ-  
խատություններում հիմնվում եր այդ  
գաղափարների վրա: Լենինի մոտ այս  
բնագավառում նորն այն է, վոր  
ա) նա ի մի հավաքեց այդ գաղափարները  
և իմպերիալիզմի դարաշրջանի ազգա-  
յին-գաղութային հեղափոխությունների  
վերաբերյալ հայացքների բարեկերտ  
սխտեմի վերածեց. բ) ազգային-գա-  
ղութային հարցը կապեց իմպերիալիզմի  
տապալման հարցի հետ. գ) ազգային-  
գաղութային հարցը միջազգային պրո-  
լետարական հեղափոխության ընդհա-  
նուր հարցի բաղկացուցիչ մասը հայ-  
տարարեց:

Վերջապես, պրոլետարիատի կուսակ-  
ցության վերաբերյալ հարցը: Մարքսն  
ու Ենգելսը տվել են հիմնական ուրվա-  
գծեր կուսակցության՝ վորպես պրոլե-  
տարիատի առաջավոր ջոկատի՝ մասին,

անանց վորի (առանց կուսակցութեան) պրոլետարիատը չի կարող ձեռք բերել իր ազատութիւնը վո՛չ իշխանութիւնը վերցնելու իմաստով, վո՛չ եւ կասկե-տալիստական հասարակութիւնը վերա-կառուցելու իմաստով: Լենինի մոտ յայտնադաւառում նորն այն է, վոր նա ավելի զարգացրեց այդ ուրվագծե-րը՝ համապատասխան պրոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմպերիա-լիզմի ժամանակաշրջանում, ցույց տա-լով, վոր ա) կուսակցութիւնը պրոլե-տարիատի դասակարգային կազմակեր-պութեան բարձրագույն ձևն է՝ համե-մատած պրոլետարիատի կազմակերպու-թեան այլ ձևերի հետ (արհմիութիւն-ներ, կոոպերացիա, պետական կազմա-կերպութիւն), վորոնց աշխատանքը նա կոչված է ընդհանրացնելու և նրան ուղղութիւն տալու. բ) պրոլետարիա-տի դիկտատուրան կարող է իրակա-նայնապէս միայն կուսակցութեան՝ վոր-պէս նրան ուղղութիւն տվող ուժի՝

միջոցով. դ) պրոլետարիատի դիկտատուրան լիակատար կարող է լինել միայն այն դեպքում, յեթե նրան դեկտվարում է մի կուսակցութիւն, կոմունիստները կուսակցութիւնը, վորը դեկտվարութիւնը չի բաժանում և չպետք է բաժանի այլ կուսակցութիւնների հետ. դ) առանց կուսակցութեան մեջ յերկաթե կարգապահութիւն ունենալու չեն կարող իրականացվել պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրները շահագործողներին ճնշելու և դասակարգային հասարակութիւնը սոցիալիստական հասարակութեան վերակառուցելու վերաբերյալ:

Ահա հիմնականում այն նորը, ինչ տվել է Լենինն իր աշխատութիւններում՝ կոնկրետացնելով ու ավելի դարգացնելով Մարքսի ուսմունքը՝ համապատասխան պրոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմպերիալիզմի ժամանակաշրջանում:

Չենց այս պատճառով է, վոր մեզա-

նում ասում են, թե լենինիզմն իմպե-  
րիալիզմի ու սրբուկտարական հեղափո-  
խությունների դարաշրջանի մարք-  
սիզմն է:

Սրանից յերևում է, վոր լենինիզմը  
չի կարելի վո՛չ բաժանել մարքսիզմից,  
վո՛չ ել առավել ևս հակադրել մարք-  
սիզմին:

Պատվիրակության տված հարցի մեջ  
այնուհետև ասված է. «Ճի՞շտ կլինե՞ր  
արդյոք ասել, թե լենինը հավատում  
էր «ստեղծագործական հեղափոխու-  
թյանը», մինչդեռ Մարքսն ավելի հա-  
կամեա էր սպասելու անտեսական ու-  
ժերի դադարժնակետային դարգացմա-  
նը»: Յես կարծում եմ, վոր այսպես  
ասելը միանգամայն սխալ կլիներ: Յես  
կարծում եմ, վոր ամեն մի ժողովրդա-  
կան հեղափոխություն, յեթե նա իս-  
կապես ժողովրդական հեղափոխություն  
է, ուրեմն ստեղծագործական հեղափո-  
խություն է, վորովհետև նա խորատ-  
կում է հին կացութիւններ և ստեղծա-



գործում, ստեղծում և նորը: Իհարկե, վոչ մի ստեղծագործական բան չի կարող լինել, թող ներվի ասել, այնպիսի «հեղափոխություններում», վորպիսիք յերբեմն լինում են, ասենք, Ալբանիայում՝ մի շարք ցեղերի կողմից մյուսների դեմ հարուցվող խաղալիքային «ապստամբությունների» ձևով: Բայց մարքսիստներն այդպիսի խաղալիքային «ապստամբությունները» յերբեք հեղափոխություն չեն համարել: Ահներև և, վոր խոսքն այդպիսի «ապստամբությունների» մասին չե, այլ ժողովրդական մասսայական հեղափոխության մասին և, վորը հարստահարված դասակարգերին վոտքի յե հանում հարստահարող դասակարգերի դեմ: Իսկ այսպիսի հեղափոխությունը չի կարող ստեղծագործական չլինել: Մարքսն ու Լենինը կողմնակից եյին հենց այսպիսի հեղափոխության, — և միայն այսպիսի հեղափոխության: Ընդամին հոտկանալի յե, վոր այսպիսի

հեղափոխութիւնը չի կարող ծագել  
ամեն սլայմաններում, վոր նա կարող  
է բորբոքիլել տնտեսական ու քաղաքա-  
կան կարգի վորոչ բարենպաստ սլայ-  
մաններում միայն:

2-րդ ՀԱՐՑ: Կարելի՞ յե արդյոք ասել,  
քե կոմկուսակցութիւնը վերահսկում  
ե կառավարութեանը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Ամեն ինչ կախած ե  
այն բանից, թե ինչպես հասկանանք  
վերահսկողութիւնը: Կապիտալիստա-  
կան յերկրներում վերահսկողութիւնը  
մի քիչ յուրորինակ կերպով ե հաս-  
կացվում: Յես գիտեմ, վոր մի ամբողջ  
շարք կապիտալիստական կառավա-  
րութիւններ վերահսկողութեան են  
յենթարկվում խոշորագույն բանկերի  
կողմից, չնայած «դեմոկրատական»  
սլառլամենտների գոյութեանը: Պառլա-  
մենտները հավատացնում են, թե հենց  
իրենք են վերահսկում կառավարու-

Թյուճններին : Իսկ իրականում այնպես  
է լինում, վոր Ֆինանսական կոնսոր-  
ցիումներն են կանխորոշում կառավա-  
րությունները կազմն ու վերահսկո-  
ղության յենթարկում նրանց դործո-  
ղությունները : Ո՞ւմ հայտնի է, վոր  
վոչ մի կապիտալիստական «տերու-  
թյան» մեջ չի կարող կարինետ կազմը-  
վել խոչորադույն Ֆինանսական տուղե-  
րի կամքի հակառակ. բավական է Ֆի-  
նանսական ճնշում դործ դնել, — և մի-  
նիստրները դիվահարների սկս կթռչեն  
իրենց սոստերից : Սա իսկապես բան-  
կերի վերահսկողություն է կառավա-  
րություններին նկատմամբ՝ հակառակ  
սլառլամենտների յերեւակայական վե-  
րահսկողության : Յեթե խոսքն այսպիսի  
վերահսկողության մասին է, ապա յես  
պետք է հայտարարեմ, վոր դրամա-  
պարկերի վերահսկողությունը կառա-  
վարության նկատմամբ մեղանում անե-  
րեւակայելի յե ու միանգամայն բացառ-  
ված, թեկուզ հենց այն սլատճառով,

վոր մեզանում բանկերը վաղուց ազ-  
գայնացված են, իսկ դրամապարկերը  
դուրս են շարտված ԽՍՀՄ-ից :

Գուցե պատվիրակութունը ցանկա-  
նում եր հարցնել վո՛չ թե վերահսկո-  
ղության մասին, այլ կուսակցության  
կողմից կառավարությանը ղե-  
կավարելո՞ւ մասին : Յեթե պատ-  
վիրակութունը ցանկանում եր այս  
մասին հարցնել, ապա յես պատաս-  
խանում եմ. այո՛, կուսակցութունը  
մեզ մոտ ղեկավարում ե կառավարու-  
թյանը : Իսկ այս ղեկավարությու-  
նը հաջողվում ե այն պատճառով, վոք  
կուսակցութունը մեզանում վայելում  
ե բանվորների ու ընդհանրապես աշ-  
խատավորների մեծամասնության վըս-  
տահությունը և նա իրավունք ունի  
այդ մեծամասնության անունով ղեկա-  
վարելու կառավարության որդանե-  
րին :

Ինչո՞վ ե արտահայտվում կառավա-  
րության ղեկավարումը ԽՍՀՄ բան-

վորական կուսակցութեան կողմից,  
ԽՍՀՄ կոմունիստական կուսակցու-  
թեան կողմից:

Նախ և առաջ՝ նրանով, վոր մեր  
յերկրում պետական աշխատանքի հիմ-  
նական պոստերի համար կոմկուսակ-  
ցութիւնը ջանում է խորհուրդների ու  
նրանց համապատասխան միջոցով անց-  
կացնել իր թեկնածուներին, իր լավա-  
դույն աշխատողներին, վորոնք նվիր-  
ված են պրոլետարիատի գործին և  
պատրաստ են հալաւանով ու ճշմարտու-  
թեամբ ծառայելու պրոլետարիատին:  
Յեւ վ այս նրան հաջողվում է հսկայա-  
կան մեծամասնութիւն կազմող դեպ-  
քերում, վորովհետեւ բանվորներն ու  
գյուղացիները վստահութեամբ են վե-  
րաբերվում կուսակցութեանը: Սա պա-  
տահականութիւնն է, վոր իշխանու-  
թեան որդաների ղեկավարներ մեզա-  
նում հանդիսանում են կոմունիստնե-  
րը, վոր նրանք, այդ ղեկավարները,

հակայական հեղինակությունն են վայելում յերկրում :

Յերկրորդ՝ նրանով, վոր կուսակցությունն ստուգում և կառավարչության որդանների աշխատանքը, իշխանության որդանների աշխատանքը՝ ուղղելով անխուսափելի սխալներն ու թերությունները, ոգնելով նրանց կենսագործելու կառավարության վճիռներն ու աշխատելով ասպահովել նրանց համար մասսաների աջակցությունը, ընդվորում նրանք վոչ մի կարևոր վճիռ չեն ընդունում առանց կուսակցության համապատասխան ցուցումների :

Յերրորդ՝ նրանով, վոր իշխանության այս կամ այն որդանների աշխատանքի սլանը մշակելիս, լինի դա արդյունաբերության ու դյուղատնտեսության դժով, թե առևտրի ու կուլտուրական շինարարության դժով, կուսակցությունը տալիս և ընդհանուր ղեկավար ցուցումներ, վորոնք վորոշում են այդ որդանների աշխատանքի

բնույթն ու ուղղությունն այդ պլանների գործողության ժամանակվա համար :

Բուրժուական մամուլը սովորաբար «զարմանք» է արտահայտում կուսակցության կողմից պետության գործերին այսպես «միջամտելու» առթիվ : Բայց այդ «զարմանքն» ամբողջովին կեղծ է : Հայանի յե, վոր բուրժուական կուսակցությունները կապիտալիստական յերկրներում ճիշտ նույնպես «միջամտում են» պետության գործերին ու ղեկավարում կառավարություններին, ընդվորում ղեկավարությունն այնտեղ կենտրոնանում է խոշոր բանկերի հետ այս կամ այն կերպ կապված և իրենց դերը, այդ պատճառով, բնակչությունից թաղցնել ջանացող անձերի մի նեղ շրջանի ձեռքում : Ո՞ւմ հայտնի չէ, վոր յուրաքանչյուր բուրժուական կուսակցություն Անգլիայում կամ ուրիշ կապիտալիստական յերկրներում ունի իր գաղտնի կարինետը՝

րազկացած անձերի մի նեղ շրջանից,  
վորոնք իրենց ձեռքում են կենտրոնաց-  
նում ղեկավարությունը: Վերհիշեցեք  
թեկուզ ԼԼՈՅԷ Ձորջի հայտնի ճառը  
լիբերալ կուսակցության «սովերային»  
կարինետի մասին: Այս տեսակետից  
տարբերությունը խորհուրդների յերկ-  
րի ու կապիտալիստական յերկրների  
միջև այն է, վոր ա) կապիտալիզմի  
յերկրներում բուրժուական կուսակցու-  
թյունները պետությունը ղեկավարում  
են բուրժուազիայի շահերի համար ու  
պրոլետարիատի դեմ, մինչդեռ ԽՍՀՄ  
մեջ կուսակցությունը պետությանը  
ղեկավարում է պրոլետարիատի շահե-  
րի համար ու բուրժուազիայի դեմ.  
բ) բուրժուական կուսակցությունները  
թագցնում են ժողովրդից իրենց ղեկա-  
վար դերը՝ դիմելով կասկածելի գաղտ-  
նի կարինետների ոգնությանը, մինչ-  
դեռ կոմկուսակցությունը ԽՍՀՄ մեջ  
կարոտ չէ վոչ մի գաղտնի կարինետի,  
նա նշավակում է գաղտնի կարինետնե-



րի քաղաքականութիւնն ու պրակտիկան և բայորոչ հայտարարում եւ ամբողջ յերկրի առաջ, վոր ինքն իր վրայե վերցնում պետութեան ղեկավարման պատասխանատւութիւնը:

Պատվիրակներից մեկը: Նույն այդ հիմունքներով և կուսակցութիւնը ղեկավարում արհմիութիւններին:

Ստալին: Հիմնականում—այո՛: Ձևականորեն կուսակցութիւնն արհմիութիւններին վոչ մի դիրեկտիվ չի կարող տալ: Բայց կուսակցութիւնը դիրեկտիվներ եւ տալիս արհմիութիւններում աշխատող կոմունիստներին: Հայտնի յե, վոր արհմիութիւններում զան կոմունիստների Փրակցիաներ, ճիշտ այնպես, ինչպես նաև խորհուրդներում, կոոպերացիայում և այլն: Այդ կոմունիստական Փրակցիաների պարտականութիւնն այն ե, վոր համոզելու միջոցով արհմիութիւնների, խորհուրդների, կոոպերացիայի և այլ որդաններում ընդունել տան այնպիսի

վճիռներ, վորոնք համապատասխանում են հուսակցութեան դիրեկտիվներին: Յեւ վ այս նրանց հաջողվում է իրականացնել հսկայական մեծամասնութիւն կազմող դեպքերում, վորովհետև հուսակցութեան ազդեցութիւնը մասսաների մեջ հսկայական է, և նա այնտեղ մեծ վստահութիւն է վայելում: Այս ճանապարհով ենք հասնում սրբաբարեօտի ամենաբազմազան կազմակերպութիւններին դործողութիւններին միասնականութեանը: Առանց դրան մենք տարրնթացութիւն ու տարազարկ հունենայինք բանվոր դասակարգի այս կազմակերպութիւններին աշխատանքում:

3-րդ ՀԱՐՅ: Վորչափով վոր Ռուսաստանում լեգալ ե միայն մի կուսակցութիւն, դուք վորտեղից գիտեք, վոր մասսաները համակրում են կոմունիզմին:

ՊԱՏԱՍԽԱՆ: Այդ ճիշտ է, վոր  
ԽՍՀՄ մեջ չկան բուրժուական լեզու  
կուսակցություններ, վոր այնտեղ լե-  
զուությունից ուղարկւմ է միայն մի  
կուսակցություն՝ բանվորներէ կուսակ-  
ցությունը, կոմունիստներէ կուսակցու-  
թյունը: Սակայն մենք ունենք արդէոք  
ճանապարհներ ու միջոցներ՝ համոզվե-  
լու այն բանին, վոր բանվորներէ մե-  
ծամասնությունը, աշխատավորական  
մասսաներէ մեծամասնությունը համա-  
կրում է կոմունիստներին: Խոսքը վե-  
րաբերում է, իհարկէ, բանվորական ու  
գյուղացիական մասսաներին, այլ վոչ  
թէ նոր բուրժուազիային, այլ վոչ թէ  
հին շահագործող դասակարգերէ բեկոր-  
ներին, վորոնց պրոլետարիատն արդեն  
ջախջախել է: Այո՛, մենք հնարավորու-  
թյուն ունենք, մենք ունենք ճանա-  
պարհներ ու միջոցներ՝ իմանալու, թէ  
բանվորական ու գյուղացիական մասսա-  
ները համակրո՞ւմ են արդէոք, թէ չեն  
համակրում կոմունիստներին: Վերցնենք

մեր յերկրի կյանքի կարևորագույն մոմենտները և տեսնենք, արդյոք հիմք կա՞ սնդեւում, վոր մասսաներն իսկասպես համակրում են կոմունիստներին :

Վերցնենք, ամենից առաջ, այնպիսի կարևոր մոմենտ, ինչպես Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակաշրջանն և 1917 թվականին, յերբ կոմունիստների կուսակցությունը, հենց վորպես կուսակցություն, բացորոշ, կոչ ևր անոթմ բանվորներին ու գյուղացիներին՝ տապալելու բուրժուազիայի իշխանությունը, և յերբ նա, այդ կուսակցությունը, ստացավ բանվորների, զինվորների ու գյուղացիների հսկայական մեծամասնության աջակցությունը : Ի՞նչպես ևր այն ժամանակ իրադրությունը : Իշխանության գլուխ կանգնած էին սոցիալիստ-հեղափոխականները (ես-երներն) ու սոցիալ - դեմոկրատները (մենչեվիկները), վորոնք բլոկ էին կազմել բուրժուազիայի հետ : Իշխանության ապարատը կենտրոնում ու տեղերում,

Ճիշտ այնպէս, ինչպէս նաև փորձեր կու-  
 միլիոնանոց բանակիւ հրամանատարու-  
 թյան ասպարատը, դռնվում եր այդ կու-  
 սակցություններէ ձեռքում, կառավար-  
 րության ձեռքում: Կոմունիստներ-  
 ըր կուսակցությունը դռնվում եր կի-  
 սակեղալ վիճակում: Բոլոր յերկրներէ  
 բուրժուաները դուշակում եյին բոլ-  
 շէիկներէ կուսակցության անխուսափելի  
 տասլալումը: Անտանան ամբողջապէս  
 ու լիովին Կերենսկու կառավարության  
 կողմն եր կանգնած: Բայց և այնպէս  
 կոմունիստներէ կուսակցությունը, բոլ-  
 շէիկներէ կուսակցությունը չեր դադա-  
 րում սրբութարխատին կոչ անելուց՝  
 տասլալելու այդ կառավարությունը և  
 հաստատելու սրբութարխատի զիկտա-  
 տուրա: Յեւ ի՞նչ: Աշխատավոր մաս-  
 սաներէ հսկայական մեծամասնությունը  
 թիկունքում ու ճակատում ամենավճռա-  
 կան կերպով աջակցեց բոլշէիկներէ կու-  
 սակցությանը,—և Կերենսկու կառավար-  
 րությունը տասլալելեց, սրբութարխատի

իշխանությունը հաստատուից : Ի՞նչպէս  
կարող եր պատահել, վոր բուլշևիկներն  
այն ժամանակ հաղթող դուրս յեկան՝  
չնայած բոլոր յերկրների բուրժուաների  
թշնամական դուշակություններին՝  
բուլշևիկների կուսակցության կործան-  
ման մասին : Արդոք այս հանդամանքը  
չի՞ սպացուցում, վոր աշխատավորների  
լայն մասսաները համակրում են բու-  
լշևիկների կուսակցությանը : Յես կար-  
ծում եմ, վոր սպացուցում է : Ահա ձեզ  
բնակչության լայն մասսաներում կո-  
մունիստների կուսակցության ունեցած  
հեղինակավորության ու ազդեցության  
առաջին ստուգումը :

Վերցնենք հետևյալ ժամանակաշրջա-  
նը, ինտերվենցիայի ժամանակաշրջանը,  
քաղաքացիական պատերազմի ժամանա-  
կաշրջանը, յերբ անգլիական կապիտա-  
լիստներն ոկուպացիայի եյին յենթար-  
կել Ռուսաստանի Հյուսիսը, Արխանգել-  
սկի ու Մուրմանի շրջանը, յերբ ամե-  
րիկյան, անգլիական, ճապոնական ու

Ֆրանսական կապիտալիստներն ուղուղա-  
ցիայի ելին յենթարկել Սիրիերը՝ առաջ  
քաշելով Կոլչակին, յերբ Ֆրանսական  
ու. անդլիական կապիտալիստները «Ռու-  
սաստանի Հարավի» ուղուղացիայի քայ-  
լեր ձեռնարկեցին, վահանի վրա բարձ-  
րացնելով Դենիկինին ու Վրանդելին :  
Դա Անտանտի ու Ռուսաստանի հակա-  
հեղափոխական դեներալների պատե-  
րադմն եր Մոսկովայի կոմունիստական  
կառավարութեան դեմ, մեր հեղափո-  
խութեան հսկտեմբերյան նվաճումների  
դեմ : Դա բանվորների ու դյուղացիների  
լայն մասսաներում կոմունիստների  
կուսակցութեան ունեցած ուժն ու կա-  
յունութունը մեծադույն ստուգման  
յենթարկելու ժամանակաշրջանն եր :  
Յեվ ի՞նչ : Միթե հայտնի չե՞, վոր քա-  
ղաքացիական պատերազմի արդյունքն  
այն յեղալ, վոր ուղուղանտները դուրս  
չպրտվեցին Ռուսաստանից, իսկ հակա-  
հեղափոխական դեներալներին Կարմիր  
բանակը կոտորեց : Ահա հենց այստեղ

պարզվեց, վոր պատերազմի բախտը,  
 վերջին հաշվով, վճռում է վո՛չ թե  
 տեխնիկան, վոր առատորեն մատակա-  
 րարում էյին Կոլչակին ու Դենիկինին  
 ԽՍՀՄ թշնամիները, այլ ճիշտ քաղա-  
 քականությունը, բնակչության միլիո-  
 նավոր մասսաների համակրանքն ու ա-  
 ջակցությունը: Պատահակա՞ն բան է  
 արդյոք, վոր բուլշևիկները կուսակցու-  
 թյունն այն ժամանակ հաղթող դուրս  
 յեկավ: Իհարկե, պատահական բան չէ:  
 Այս հանդամանքը չի՞ խոսում արդյոք  
 այն մասին, վոր կոմունիստները կու-  
 սակցությունը մեղ մոտ վայելում է աշ-  
 խատավորները լայն մասսաների համա-  
 կրանքը: Յես կարծում եմ, վոր խոսում  
 է: Ահա ձեզ ԽՍՀՄ մեջ կոմունիստա-  
 կան կուսակցության ունեցած ուժի ու  
 կայունության յերկրորդ ստուգումը:

Անցնենք ներկա ժամանակաշրջանին,  
 հետպատերազմյան ժամանակաշրջանին,  
 յերբ հերթի դրվեցին խաղաղ շի-  
 նարարության հարցերը, յերբ տըն-



տեսական ավերմունքի շրջանին  
փոխարինեց ինդուստրիայի վերա-  
կանդնման շրջանը, վերջապես՝ մեր ամ-  
բողջ ժողովրդական տնտեսությունը  
տեխնիկական նոր բաղայի վրա վերա-  
կառուցելու շրջանը: Արդյոք այժմ ճա-  
նապարհներ ու միջոցներ ունե՞նք մենք,  
վորպեսզի ստուգենք կոմունիստների  
կուսակցության ուժն ու կայունություն-  
նը, վորպեսզի վորոշենք աշխատավորնե-  
րի լայն մասսաների կողմից դեպի այս  
կուսակցությունը տա՞վող համակրանքի  
աստիճանը: Յես կարծում եմ, վոր ու-  
նենք:

Վերցնենք ամենից առաջ արհմիու-  
թյունները, վորոնք միավորում են մոտ  
10 միլիոն պրոլետարներ, տեսնենք մեր  
արհմիությունների ղեկավար որդաննե-  
րի կազմը: Պատահակա՞ն է արդյոք,  
վոր այս որդանների գլուխ կոմունիստ-  
ներն են կանգնած: Իհարկե, պատահա-  
կան չէ: Հիմար բան կլինե՞ր կարծել,  
թե ԽՍՀՄ բանվորներն անտարբեր են

վերաբերվում դեպի արհմիությունների  
դեկավար որդանների կազմը: ԽՍՀՄ  
բանվորներն աճել ու դաստիարակվել են  
յերեք հեղափոխությունների փոթորիկի  
մեջ: Վոչ վոք այնպես չի սովորել, ինչ-  
պես նրանք՝ ստուգել իրենց դեկավարնե-  
րին և նրանց դուրս շարտել, յեթե նրանք  
սրբուհատրիատի շահերին չեն բախարա-  
րում: Մեր կուսակցության մեջ մի ժա-  
մանակ ամենաթողութեան մարդը  
Պլեխանովն էր: Մակայն բանվորները  
կանգ չառան այն բանի առաջ, վորպես-  
պի վճռաբար մեկուսացնեն նրան, յերբ  
նրանք համոզվեցին, վոր Պլեխանովը  
հեռացել է սրբուհատրական դժից: Յեւ  
յեթե այդպիսի բանվորներն արտահայ-  
տում են իրենց լիակատար վստահու-  
թյունը կոմունիստներին՝ նրանց սուղ  
քաշելով արհմիություններում սլատաս-  
խանատու սրստերի համար, սպա այդ  
չի կարող ուղղակի մատնանչումն չճա-  
ռայել այն բանի, վոր կոմունիստական  
կուսակցության ուժն ու կայունություն-

նը ԽՍՀՄ բանվորների շրջանում—հըս-  
կայական են: Ահա ձեզ ստուգումն այն  
բանի, վոր բանվորների լայն մասսա-  
ներն անպայման համակրում են կոմու-  
նիստների կուսակցութեանը:

Վերջենք խորհուրդների վերջին  
ընտրութեանները: Մեզանում խոր-  
հուրդների ընտրութեան իրավունք վա-  
յելում և ԽՍՀՄ ամբողջ չտիահաս  
բնակչութեանը՝ սկսած 18 տարեկան  
հասակից, առանց սեռի ու ազգութեան  
խտրութեան, մինուս բուրժուական  
տարրերը, վորոնք շահագործում են  
ուրիշի աշխատանքը և զրկված են ընտ-  
րական իրավունքներից: Այդ կազմում  
և մոտ 60 միլիոն ընտրող: Դրանց  
հակայական մեծամասնութեանը, իհար-  
կե, դյուրացիներն են: Այդ 60 միլիո-  
նից ընտրական իրավունքներն իրակա-  
նացրին մոտ 51 տոկ, այսինքն՝ 30 մի-  
լիոնից ավելին: Հիմա աչքի անցկաց-  
րեք մեր խորհուրդների ղեկավար ու-  
ղանների կազմը կենտրոնում ու տեղե-

րում: Կարելի՞ Ե արդյոք պատահա-  
կանութիւնն անվանել այն փաստը, Վոր  
ընտրովի ղեկավար տարրերի հսկայա-  
կան մեծամասնութիւնը կոմունիստներն  
են կազմում: Պարզ է, Վոր այս չի կա-  
րելի պատահականութիւնն անվանել:  
Արդյոք այս փաստը չի՞ խոսում այն  
մասին, Վոր կոմունիստական կուսակ-  
ցութիւնը վստահութիւնն է վայելում  
դյուղացիութեան միլիոնավոր մասսա-  
ների շրջանում: Յես կարծում եմ, Վոր  
խոսում է: Ահա ձեզ կոմունիստական  
կուսակցութեան ուժի ու կայունութեան  
դարձյալ մի ստուգում:

Վերցնենք կոմյերիտմիութիւնը (յե-  
րիտասարդութեան կոմունիստական մի-  
ութիւնը), Վորը միավորում է մոտ 2  
միլիոն բանվորական ու դյուղացիական  
յերիտասարդութիւն: Կարելի՞ Ե ար-  
դյոք պատահականութիւնն անվանել այն  
փաստը, Վոր կոմյերիտմիութեան ընտ-  
րովի ղեկավար տարրերի հսկայական  
մեծամասնութիւնը կազմում են կոմու-

նիստները: Յես կարծում եմ, վոր այս  
չի կարելի պատահականությունն անվա-  
նել: Ահա ձեզ կոմունիստական կուսակ-  
ցության ուժի ու հեղինակավորության  
դարձյալ մի ստուգում:

Վերցնենք, վերջապես, մեր անթիվ  
կոնֆերենցիաները, խորհրդակցություն-  
ները, պատվիրակային ժողովները և  
այլն, վորոնք ընդգրկում են ԽՍՀՄ  
կազմի մեջ մտնող բոլոր ու ամեն տե-  
սակի ազգությունները աշխատավոր  
տղամարդկանց ու կանանց, բանվորների  
ու բանվորուհիների, գյուղացիների ու  
չեղջկուհիների միլիոնավոր մասսաներ:  
Այս խորհրդակցությունների ու կոնֆե-  
րենցիաների մասին Արևմուտքում յեր-  
բեմն հեզնում են՝ պնդելով, թե ոուս-  
ներն առհասարակ սիրում են խոսել:  
Այնինչ մեզ համար այդ խորհրդակցու-  
թյուններն ու կոնֆերենցիաներն ունեն  
հսկայական նշանակություն ինչպես  
մասսաների տրամադրությունն ստուգե-  
լու իմաստով, այնպես էլ մեր սխալ-

ներն ի հայտ բերելու և այդ սխալները վերացնելու միջոցներ ուրվազծելու իմաստով, վորովհետև մեզանում քիչ չեն սխալները, և մենք զբանք չենք թաղցնում՝ յենթադրելով, վոր սխալներն ի հայտ բերելն ու նրանք ազնվորեն ուղղելը յերկրի ղեկավարումը բարելավելու լավագույն միջոցն է: Աչքի անցկացրեք այդ կոնֆերենցիաների ու խորհրդակցությունների հռետորների ճառերը, աչքի անցկացրեք բանվորներից ու դյուլագիներից յելած այդ «հասարակ մարդկանց» դործարարական ու անխորամանկ դիտողությունները, աչքի անցկացրեք նրանց վճիռները, — և դուք կտեսնեք, թե վորչափ հսկայական են կոմունիստական կուսակցության ազդեցությունն ու հեղինակավորությունը, դուք կտեսնեք, վոր այդ ազդեցությանն ու այդ հեղինակավորությանը կարող էր նախանձել աշխարհիս ամեն մի կուսակցություն: Ահա ձեզ կոմունիստա-

կան կուսակցութեան կայունութեան  
դարձյալ մի ստուգում :

Արանք են այն ճանապարհներն ու մի-  
ջոցները, վորոնք հնարավորութեան են  
տալիս ստուգելու կոմունիստական կու-  
սակցութեան ուժն ու ազդեցութեանը  
ժողովրդական մասսաների մեջ :

Ահա թե ինձ վորտեղից ե հայտնի,  
վոր ԽՍՀՄ բանվորների ու գյուղացի-  
ների լայն մասսաները համակրում են  
կոմունիստական կուսակցութեանը :

4-րդ ՀԱՐՅ : Յեթե անկուսակցական  
մի խումբ փրակցիա կազմակերպեր և  
ընտրություններում առաջադրեր իր  
քեկնածուներին, վորոնք կանգնած են  
խորհրդային կառավարութեանն աջակ-  
ցելու պլատֆորմի վրա, բայց դրա  
հետ մեկտեղ արտաքին առևտրի մոնո-  
պոլիայի վերացում պահանջեր,—ար-  
դյոք նրանք կկարողանայի՞ն իրենց մի-  
ջոցներն ունենալ ու ակտիվ ֆաղաֆա-  
կան կամպանիա մղել :

ՊԱՏԱՍԽԱՆ: Յես կարծում եմ, վոք  
այս հարցում անհաշտելի հակասու-  
թյուն կա: Անկարելի յե պատկերաց-  
նել վորևե մի խումբ, վորը կանդնած  
լինի խորհրդային կառավարությանն ա-  
ջակցելու պլատֆորմի վրա և դրա հետ  
մեկտեղ պահանջի վերացնել արտաքին  
առևտրի մոնոպոլիան: Ինչո՞ւ: Այն  
պատճառով, վոր արտաքին առևտրի  
մոնոպոլիան խորհրդային կառավա-  
րության «պլատֆորմի» անհող-  
դողդ հիմքերից մեկն է: Այն պատճա-  
ռով, վոր արտաքին առևտրի մոնոպո-  
լիայի վերացում պահանջող խումբը չի  
կարող խորհրդային կառավարությանն  
աջակցելու կողմնակից լինել: Այն պատ-  
ճառով, վոր այդպիսի խումբը կարող  
է լինել միայն մի խումբ, վորը խորա-  
պես թշնամի յե ամբողջ խորհրդային  
հասարակակարգին:

ԽՄՀՄ մեջ կան, իհարկե, տարբեր,  
վորոնք արտաքին առևտրի մոնոպոլիա-  
յի վերացումն են պահանջում: Այդ՝



նեպմաններն են, կուլակները, արդէն  
ջախջախված շահագործող դասակարգե-  
րի բեկորները և այլն: Բայց այս տար-  
րերը բնակչության չնչին վտօքրամաս-  
նությունն են կազմում: Յեա կարծում  
եմ, վոր պատվիրակությունն իր տված  
հարցում այս տարրերի մասին չէ, վոր  
խոսում ե: Իսկ յեթե խոսքը վերաբերում  
ե բանվորներին ու գյուղացիների աշ-  
խատավորական մասսաներին, ապա յես  
պետք ե ասեմ, վոր արտաքին առևտրի  
մոնոպոլիայի վերացման պահանջը  
նրանց չըջանում կարող եր լուկ քրքիջ  
ու թշնամական վերաբերմունք առա-  
ջացնել:

Իրոք բանվորների համար ի՞նչ կա-  
րող եր նշանակել արտաքին առևտրի  
մոնոպոլիայի վոչնչացումը: Այժ նրանց  
համար կնշանակեր հրաժարումն յեր-  
կիրն ինդուստրացնելուց, նոր շործա-  
րաններ ու ֆաբրիկաներ կառուցելուց,  
հին գործարաններն ու ֆաբրիկաներն  
ընդլայնելուց: Այս նրանց համար կնշա-

նակեր ԽՍՀՄ հեղեղել կապիտալիստա-  
կան յերկրներից՝ յեկող ասլրանքներով,  
կծկել մեր ինդուստրիան նրա համե-  
մատական թուլութեան շնորհիւ, բազ-  
մասլատկել դործազուրկների թիւը,  
վատթարացնել բանվոր դասակարգի  
նյութական դրութեանը, թուլացնել  
նրա տնտեսական ու քաղաքական դիր-  
քերը: Վերջին հաշվով այս կնշանակեր  
ուժեղացնել նեպմանին ու սոհասարակ  
նոր բուրժուազիային: ԽՍՀՄ սլրուտա-  
բխատը կարող եւ արդոք այս ինքնա-  
սսլանութեանը դիմել: Պարզ եւ, վոր չի  
կարող:

Իսկ դոլարացիութեան աշխատավոր  
մասսաների համար ի՞նչ կնշանակեր  
արտաքին առևտրի մոնոպոլիայի վոչըն-  
չացումը: Այդ կնշանակեր մեր յերկիրն  
ինքնուրույն յերկրից մի կիսազաղու-  
թային յերկրի վերածել ու դոլարացիա-  
կան մասսաներին աղքատացնել: Այդ  
կնշանակեր դարձ դեսլի այն «ազատ  
առևտրի» սեժիմը, վորը թաղավորում

եր Կոլչակի ու Գենիկինի որով, յերբ  
հակահեղափոխական դեմերալների ու  
«դաշնակիցների» միացյալ ուժերի հա-  
մար հեշտ եր բազմամիլիոն դյուղա-  
ցիուլթյանը թալանելն ու կողոպտելը:  
Վերջին հաշվով այդ կնշանակեր Կու-  
լակների ու այլ շահագործող տարրերի  
ուժեղացում դյուղում: Գյուղացիները  
բալականաչափ ճաշակել են այդ ուժի-  
մի սքանչելիքներն Ուկրաինայում ու  
Հյուսիսային Կովկասում, Վոլգայի ա-  
փերին ու Սիբիրում: Ի՞նչ հիմքեր կան  
յենթադրելու, Վոր նրանք կցանկանան  
նորից այդ ողն իրենց վիզը գցել:  
Մի՞թե սլարդ չեն, Վոր դյուղացիուլթյան  
աշխատավոր մասսաները չեն կարող  
արտաքին առևտրի մոնոպոլիայի վոչըն-  
չացման կողմնակից լինել:

Պատվիրակներից մեկը: Պատվիրակու-  
թյունն առաջադրեց արտաքին առևտրի  
մոնոպոլիայի վերաբերյալ, նրա վե-  
րացման վերաբերյալ կետը վորպես մի  
կետ, Վորի շուրջը կարող կլինեք կադ-

մակերայլէլ բնակչության մի ամբողջ  
խումբ, յեթե ԽՍՀՄ մեջ մի կուսակ-  
ցության մոնոպոլիա, լեզալուծյան մո-  
նոպոլիա չլինէր :

Ստալին : Այսպիսով պատվիրակու-  
թյունը վերադառնում է կոմունիստա-  
կան կուսակցության՝ վորպէս ԽՍՀՄ  
մեջ միակ լեզալ կուսակցության՝ մո-  
նոպոլիայի հարցին : Այս հարցի կարճ  
պատասխանը յես արդէն տալի, յերբ  
խոսում եյի բանվորների ու գյուղացի-  
ների միլիոնավոր մասսաների դեպի  
կոմունիստական կուսակցությունը տա-  
ծած համակրանքն ստուգելու ճանա-  
պարհների ու յեղանակների մասին :  
Ինչ վերաբերում է բնակչության մյուս  
խավերին, — կուլակներին, նեպմաններ-  
ին, ջախջախած հին շահագործող  
դասակարգերի մնացորդներին, —  
ասպա նրանք մեղանում զրկված  
են իրենց քաղաքական կազմակերպու-  
թյունն ունենալու իրավունքից՝ ճիշտ  
այնպէս, ինչպէս վոր նրանք զրկված

են ընտրական իրավունքներին: Պրոլե-  
տարիատը բուրժուազիայից Ֆարբիկա-  
ներն ու գործարանները, բանկերն ու  
յերկաթուղիները, հողն ու հանքահո-  
րերը չե միայն, վնր խլել է: Նա բուր-  
ժուազիայից խլել է նաև իր քաղաքա-  
կան կազմակերպությունն ունենալու ի-  
րավունքը, վորովհետև սլրոլետարիատը  
բուրժուազիայի իշխանության վերա-  
կանդնումը չի ցանկանում: Պատվիրա-  
կությունն, ըստ յերևութին, առար-  
կություններ չունի այն բանի դեմ, վոր  
ԽՍՀՄ սլրոլետարիատը բուրժուազիայից  
ու կալվածատերերից խլել է Ֆարբիկա-  
ներն ու գործարանները, հողն ու յեր-  
կաթուղիները, բանկերն ու հանքահո-  
րերը: (Միծաղ): Բայց պատվիրակու-  
թյունը, ինչպես ինձ թվում է, վիճքը  
ինչ տարակուսում է այն շտթիվ, վոր  
սլրոլետարիատը դրանով չբավականա-  
ցավ ու ավելի առաջ դնաց՝ բուրժուա-  
զիայից խլելով քաղաքական իրավունք-  
ները: Սա, ըստիս, այնքան էլ տրա-

մտրանականն չե կամ, ավելի ճիշտը,  
բուրբովին արամարանական չե: Ի՞նչ  
հիման վրա յեն պրոլետարիատից մե-  
ծահոգություն պահանջում բուրժուա-  
զիայի նկատմամբ: Մի՞թե բուրժուա-  
զիան Արևմուտքում, իշխանության  
գլուխ դանկելով, թեկուզ ամենափոքր  
մեծահոգություն և ցուցարբերում բան-  
վոր դասակարգի նկատմամբ: Մի՞թե  
նա ընդհատակ չի քշում բանվոր  
դասակարգի խկապես հեղափոխա-  
կան կուսակցություններին: Ի՞նչ հիման  
վրա յեն ԽՍՀՄ պրոլետարիատից մեծա-  
հոգություն պահանջում դեպի իր դա-  
սակարգային թշնամին: Յես կարծում  
եմ, վոր արամարանությունը պարտա-  
վորեցնում և: Նա, ով մտածում և  
բուրժուազիային նրա քաղաքական ի-  
րավունքները վերադարձնելու հնարավոր-  
ության մասին, նա պետք և, յեթե նա  
ուզում և արամարանական լինել, ավե-  
լի հեռուն գնա և Փարբիկաներն ու  
դործարանները, յերկաթուղիներն ու

բանկերը բուրժուազիային վերադարձնելու հարցն ևս գնի:

Պատվիրակներից մեկը: Պատվիրակութեան խնդիրն եր՛ տարզել, թե ինչ կերպ կարող են իրենց լեզալ արտահայտութիւնը գտնել բանալոր դասակարգի ու գյուղացիութեան մեջ յեղած այն կարծիքները, վորոնք տարբեր են հոմիոսակցութեան կարծիքներից: Սխալ հղիներ բանն այնպէս հասկանալ, թե պատվիրակութիւնը հետաքրքրվում ե բուրժուազիային քաղաքական իրավունքներ տալու հարցով, այն հարցով, թե բուրժուազիան ինչպէս կարող ե իր կարծիքներն ի հայտ բերելու լեզալ արտահայտութիւն գտնել: Խոսքը հենց այն մասին ե, թե ինչ կերպ կարող են իրենց լեզալ արտահայտութիւնը գտնել բանալոր դասակարգի ու գյուղացիութեան մեջ յեղած այն կարծիքները, վորոնք տարբեր են հոմիոսակցութեան կարծիքներից:

Մեկ ուրիշ պատվիրակ: Այդ տար-

րեր կարծիքները կկարողանային իրենց արտահայտությունը դանեւ բանվոր դասակարգի մասսայական կազմակերպություններում, արհմիություններում և այլն:

Ստալին: Շատ լավ: Հետևաբար՝ խոսքը բուրժուազիայի քաղաքական իրավունքների վերականգնման մասին չէ, այլ կարծիքների պայքարի մասին բանվոր դասակարգի ու գյուղացիության ներսում: Արդյոք ներկայումս կարծիքների պայքար տեղի ունի՞ բանվորների ու գյուղացիության աշխատավոր մասսաների շրջանում: Անպայման տեղի ունի: Ձի կարող լինե՞լ, վոր միլիոնավոր բանվորներն ու գյուղացիները միանման մտածեն: Այդպիսի բան կյանքում չի լինում: Նախ, բանվորների ու գյուղացիների միջև մեծ տարբերություն կա թե՛ նրանց տնտեսական գրության իմաստով, թե՛ այս կամ այն հարցերի վերաբերյալ նրանց հայացքների իմաստով: Յերկրորդ,



հայացքներում վորոչ տարբերութիւններ  
դոյութիւն ունեն ընկոր դասա-  
կարգի մեջ եւ — դաստիարակութեան  
տարբերութիւն, հասակների, խա-  
նրվածքի տարբերութիւն, տարբերու-  
թիւն բնիկ բանվորների ու գյուղից  
յեկած բանվորների միջև եւ այլն: Այս  
ամենը տանում եւ դեպի կարծիքների  
պայքար բանվորների ու գյուղացիու-  
թեան աշխատավոր մասսաների մեջ,  
վորն իր լեզու արտահայտութիւնն  
ստանում եւ ժողովներում, արհմիու-  
թիւններում, կոոպերացիայում, խոր-  
հուրդների ընտրութիւնների ժամանակ  
եւ այլն:

Բայց այժմ, պրոլետարական դիկտա-  
տուրայի պայմաններում, տեղի ունե-  
ցող կարծիքների պայքարի ու անցյա-  
լում, մինչև Հոկտեմբերյան հեղափո-  
խութիւնը, տեղի ունեցած կարծիքնե-  
րի պայքարի միջև արմատական տար-  
բերութիւն դոյութիւն ունի: Այն ժա-  
մանակ, անցյալում, կարծիքների պայ-

քարը բանվորներէ ու աշխատավոր  
 դյուղացիներէ շրջանում՝ կենտրոնա-  
 նում եր գլխավորապէս կալվածատերե-  
 ցին, ցարիզմը, բուրժուազիային տա-  
 սլալելու հարցերէ վրա, բուրժուական  
 կարգերը խորտակելու վրա: Հիմա,  
 սլոռլետարիատի դիկտատուրայի սլայ-  
 մաններում, կարծիքներէ սլայքարն ըն-  
 թանում և վո՛չ թե խորհրդային իշխա-  
 նությունը տասլալելու, խորհրդային  
 կարգերը խորտակելու հարցերէ շուրջը,  
 ալև խորհրդային իշխանության որդան-  
 ները բարելավելու, նրանց աշխատանքը  
 բարելավելու հարցերէ շուրջը: Այստեղ  
 արմատական տարբերություն կա:  
 Զարմանալի վոչինչ չկա այն բանում,  
 վոր դոյություն ունեցող կարգերը հե-  
 դափոխականորեն խորտակելու հարցի  
 շուրջը յեղած կարծիքներէ սլայքարն  
 անցյալում հիմք եր տալիս, վորպեսզի  
 բանվոր դասակարգի ու դյուղացիու-  
 թյան աշխատավորական մասսաներէ  
 ներսում յերևան դան միմյանց դեմ

մըցող միջանի կուսակցություններ :  
Այդ կուսակցություններն ելին՝ բու-  
շևիկների կուսակցությունը, մենչևիկ-  
ների կուսակցությունը, ես-երների  
կուսակցությունը : Մյուս կողմից,  
բնավ զգուշ չե հասկանալ նաև այն,  
վոր կարծիքների պայքարն այժմ,  
պրոլետարիատի դիկտատուրայի որով,  
պայքար, վորի նպատակն և դոյու-  
թյուն ունեցող խորհրդային կարգերի  
վո՛չ թե խորտակումը, այլ նրանց բա-  
րելավումն ու ամրապնդումը, բանվոր-  
ների ու դյուղի աշխատավորական  
մասսաների շրջանում միջանի կուսակ-  
ցությունների դոյության համար  
սնունդ չի տալիս : Ահա թե ինչու մի-  
այն մի կուսակցության, կոմունիստ-  
ների կուսակցության լեղալուծյունը,  
այդ կուսակցության մոնոպոլիան վո՛չ  
միայն առարկություններ չի առաջաց-  
նում բանվորների ու աշխատավոր  
դյուղացիների շրջանում, այլ, ընդհա-  
կառակն, ընկալվում և վորպես ինչ-

վոր անհրաժեշտ ու ցանկալի մի բան :  
Մեր կուսակցութեան՝ վորպէս յերկ-  
րում միակ լեզալ կուսակցութեան՝  
դրութունը (կոմկուսակցութեան մոնո-  
պոլիա) արհեստական և միատուօվ  
հնարված վորեւ բան չէ : Այսպիսի  
դրութունը չի կարող ստեղծվել ար-  
հեստականորեն, վարչական մեքենա-  
յությունների և այլնի միջոցով : Մեր  
կուսակցութեան մոնոպոլիան կյանքից  
ե աճել, պատմականորեն կաղմավոր-  
վել վորպէս արդյունք այն բանի, վոր  
ես-երների ու մենչեիկների կուսակ-  
ցությունները մեր իրականութեան  
պայմաններում վերջնականապէս սնան-  
կացան ու ասպարեղից վայր իջան :  
Ի՞նչ էլին ես-երների ու մենչեիկների  
կուսակցություններն անցյալում : Բուր-  
ժուական ազդեցությունը պրոլետա-  
րիատի մեջ անցկացնողներ : Ինչո՞վ եր  
սնվում ու պահպանվում այդ կուսակ-  
ցությունների դոյությունը մինչև 1917  
թվի հոկտեմբերը : Բուրժուաների դա-

սահարգի առկայութեամբ, վերջապէս  
բուրժուական իշխանութեան առկայու-  
թեամբ: Մի՞թե պարզ չէ, վոր բուր-  
ժուակիւսի տասալմամբ պետք է ան-  
հետանային այդ կուսակցութեանն: Երի  
դոյութեան հիմքերը: Իսկ ի՞նչ դար-  
ձան այդ կուսակցութեանները 1917  
թվի հսկանմանից հետո: Նրանք դար-  
ձան կապիտալիզմի վերականգնման ու  
պրոլետարիատի իշխանութեան տասալ-  
ման կուսակցութեաններ: Մի՞թե պարզ  
չէ, վոր այդ կուսակցութեանները  
պետք է ամեն մի հող ու ամեն մի  
աղբեցութեան կորցնելին բանվորների  
ու դոյուղացիութեան աշխատավորական  
մասսաների շրջանում:

Բանվոր դասակարգի վրա ազդեցու-  
թեան ունենալու համար կոմունիստ-  
ների կուսակցութեան և ես-ներների ու  
մենչեիկների կուսակցութեանների մի-  
ջև մղվող պայքարը յերեկվանից չի  
սկսվել: Նրա սկիզբը համարում են  
մասսայական հեղափոխական շարժման

առաջին նշանները մոմենտը Ռուսաստանում, դեռևս 1905 թվից առաջ: 1903 թ. մինչև 1917 թվի հոկտեմբերը յեղած ժամանակաշրջանը մեր յերկրի բանվոր դասակարգի մեջ կարծիքների կատաղի պայքարի ժամանակաշրջան է, բուլշևիկների, մենչևիկների ու ես-եր-ների միջև բանվոր դասակարգի մեջ ունենալիք ազդեցության համար մղվող պայքարի ժամանակաշրջան: Այդ ժամանակաշրջանում ԽՍՀՄ բանվոր դասակարգը յերեք հեղափոխության բովով անցավ: Նա այդ հեղափոխությունների կրակի մեջ եր փորձում ու ստուգում այդ կուսակցություններին, նրանց պիտանիությունը պրոլետարական հեղափոխության դործի համար, նրանց պրոլետարական հեղափոխականությունը: Յեվ ահա, 1917 թվի հոկտեմբերյան որերին, յերբ պատմությունն ամփոփեց անցյալ ամբողջ հեղափոխական կռվի արդյունքները, յերբ պատմությունն իր կշեռքով կշռեց բանվոր դաս-

սակարդի ներսում կովոզ կուսակցու-  
թյուններէ տեսակարար կշիռը, — ՍՍՀՄ  
բանվոր դասակարգը, վերջապես,  
կատարեց վերջնական ընտրությունը՝  
կանգ առնելով կոմունիստական կու-  
սակցութեան՝ վորպես միակ սլոլետա-  
րական կուսակցութեան՝ վրա: Ինչո՞վ  
բացատրել այն փաստը, վոր բանվոր  
դասակարգի ընտրությունը կանգ առավ  
կոմունիստական կուսակցութեան վրա:  
Մի՞թե սա փաստ չե, վոր բուլշևիկները  
լենինդրագի խորհրդում, որինակ,  
1917 թվի ապրիլին, աննշան փոքրա-  
մասնություն եյին: Մի՞թե սա փաստ  
չե, վոր ես-երներն ու մենշևիկներն  
այն ժամանակ խորհուրդներում հակա-  
յական մեծամասնություն ունեյին:  
Մի՞թե սա փաստ չե, վոր մինչհոկ-  
տեմբերյան որերին իշխանութեան ամ-  
բողջ ապարատն ու հարկադրման բոլոր  
միջոցները գտնվում եյին ես-երների  
ու մենշևիկների կուսակցությունների  
ձեռքում, վորոնք բլոկ եյին կազմել

բուրժուազիայի հետ: Սա բացատրվում է նրանով, վոր կոմկուսակցությունն այն ժամանակ պատերազմի լիկվիդացիայի, անհասպաղ դեմոկրատական հաշտության կողմնակից եր, մինչդեռ ես-երների ու մենչևիկների կուսակցությունները պաշտպանում էին «պատերազմը մինչև հաղթական վախճան», իմպերիալիստական պատերազմի շարունակումը: Սա բացատրվում է նրանով, վոր կոմկուսակցությունն այն ժամանակ կերենսկու կառավարության տասպաման, բուրժուական իշխանության տասպաման, Ֆաբրիկաների ու գործարանների, բանկերի ու յերկաթուղիների աշխայնացման կողմնակից եր, մինչդեռ մենչևիկների ու ես-երների կուսակցությունները կռվում էին հանուն կերենսկու կառավարության ու պաշտպանում էին բուրժուազիայի իրավունքները Ֆաբրիկաների ու գործարանների վերաբերմամբ, բանկերի ու յերկաթուղիների վերաբերմամբ:



Մտ ըստ ցատրվում ե նրանով, վոր կոմունիստները կուսակցությունն այն ժամանակ կողմնակից եր կալվածատիրական հողերը անհատադ ըննադրաման հողուտ դյուղացիները, մինչդեռ ես-երները ու մենչեիկները կուսակցություններն այդ հարցը հետաձգում եյին մինչև Սահմանադիր ժողովը, վորը դումարումն, իր հերթին, հետաձգում եյին անորոշ ժամանակով: Եւ ի՞նչ զարմանալու բան կա այստեղ, յեթե բանվորներն ու դյուղացիական չքավորությունը վերջապես ընտրություն կատարեցին հողուտ կոմունիստական կուսակցության: Եւ ի՞նչ զարմանալու բան կա այստեղ, յեթե ես-երները ու մենչեիկները կուսակցություններն այնպես արագ կերպով դեպի հատակն իջան: Ահա թե ինչն ե պատճառը, վոր իշխանության գլուխ կոմունիստական կուսակցությունն անցավ:

Հետագա ժամանակաշրջանը, 1917

Թվի հետհսկումը բերյան ժամանակաշրջանը, քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանը մենչևիկների ու Եսեքների վերջնական կործանման ժամանակաշրջանն էր, բուլչևիկների կուսակցության վերջնական հաղթանակի ժամանակաշրջանը: Մենչևիկներն ու Եսեքներն իրենք հեշտացրին այդ ժամանակաշրջանում կոմկուսակցության հաղթանակը: Մենչևիկյան ու Եսեքական կուսակցությունների բեկորները Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ ջախջախված ու հատակ իջեցված լինելով՝ սկսեցին կասկածել կուլակների հակահեղափոխական ապստամբությունները հետ, բլոկ կազմեցին կուլչակյանների ու գենիկինյանների հետ, ծառայելու գնացին Անտանտի մոտ և բանվորների ու գյուղացիների աչքում վերջնականապես թաղեցին իրենց: Այնպիսի պատկեր ստեղծվեց, Վոր Եսեքներն ու մենչևիկները, Վորոնք բուրժուական հեղափոխականներից բուր-

Ժուական հաղահեղափոխականների էյին  
վերածվել, ոգնում էյին Անտանտին  
խեղդելու նոր, խորհրդային Ռուսաս-  
տանը, մինչդեռ բոլշևիկների կուսակ-  
ցությունը, իր շուրջը միավորելով  
այն ամենը, ինչ կենդանի յեր ու հե-  
ղափոխական, բանվորների ու գյուղա-  
ցիների ավելի ու ավելի նոր ջոկատներ  
եր վստքի հանում պայքարելու հանուն  
սոցիալիստական հայրենիքի, պայքա-  
րելու ընդդեմ Անտանտի: Միանգամայն  
բնական է, վոր կոմունիստների հաղ-  
թությունն այս ժամանակաշրջանում  
պետք է հասցներ ու իրոք հասցրեց  
եսերների ու մենշևիկների լիակատար  
պարտությանը: Ել ի՞նչ զարմանալու  
բան կա այստեղ, յեթե այս ամենից  
հետո կոմկուսակցությունը զարձավ  
բանվոր դասակարգի ու գյուղացիական  
չքավորության միակ կուսակցությունը:  
Ահա թե ինչպես կազմավորվեց մե-  
զանում կոմկուսակցության՝ վորպես

յերկրի միակ լեզու կուսակցութեան՝  
մոնոպոլիան :

Դուք խոսում եք բանվորների ու  
գյուղացիների շրջանում տեղի ունեցող  
կարծիքների պայքարի մասին այժմ,  
պրոլետարական դիկտատուրայի պայ-  
մաններում : Յես արդեն ասացի, վոր  
կարծիքների պայքար կա և կլինի, վոր  
առանց դրան անհնարին և առաջ չարժ-  
վելը : Բայց կարծիքների պայքարը  
բանվորների շրջանում այժմյան պայ-  
մաններում ընթանում և վո՛չ թե խոր-  
հրդային կարգերի տապալման վերա-  
բերյալ սկզբունքային հարցերի շուրջը,  
այլ խորհուրդների բարելավման, խոր-  
հրդային որդանների սխալների ուղղ-  
ման գործնական հարցերի շուրջը,  
հետևաբար՝ խորհրդային իշխանութեան  
ամրացման շուրջը : Միանգամայն հաս-  
կանալի յե, վոր կարծիքների այդպի-  
սի պայքարը կարող և միայն ամրա-  
պնդել ու կատարելագործել կոմունիս-  
տական կուսակցութեանը : Միանգա-

մայն հասկանալի յե, վոր կարծիքների  
այդպիսի ստյգարը կարող ե միմիայն  
ամբապնդել կամ կուսակցության մոնո-  
պոլիան: Միանգամայն հասկանալի յե,  
վոր կարծիքների այդպիսի ստյգարը  
չի կարող սնունդ տալ, վորպեսզի  
ուրիշ կուսակցություններ կազմավոր-  
վեն բանվոր դասակարգի ու աշխատա-  
վորական գյուղացիության ընդերքում:

5-րդ ՀԱՐՅ: Արդյոք դուք կարո՞ղ  
եք համառոտակի հաղորդել մեզ ձեր  
և Տրոցկու միջև յեղած հիմնական  
տարակարծությունները:

ՊԱՏԱՍԽԱՆ: Ամենից առաջ յես  
պետք ե ասեմ, վոր Տրոցկու հետ  
ունեցած տարակարծություններն անձ-  
նական տարակարծություններ չեն: Յե-  
թե տարակարծություններն անձնական  
բնույթ կրեյին, կուսակցությունը վոչ  
մի ժամ չեր զբաղվի այդ գործով,  
վորովհետև նա չի սիրում, վոր առան-  
ձին անձեր ցայտադրվեն (ВЫПЯЧИВА-

ԱՊՅԵ) : Ակներև ե, վոր խոսքը վերա-  
 բերում ե հուսակցության մեջ յեզոյ  
 տարածայնություններին : Յես այսպես  
 հասկացա այդ հարցը : Այո՛, այդ տա-  
 րածայնությունները դոյություն ունեն  
 հուսակցության մեջ : Այդ տարածայ-  
 նությունների բնույթի մասին մոտ  
 ժամանակներս բավական մանրամասն  
 պատմեցին իրենց զեկուցումներում՝  
 ընկ . Ռիկովը—Մոսկվայում, ընկ . Բու-  
 խարինը—Լենինգրադում : Այդ զեկու-  
 ցումները հրապարակված են : Այն ամե-  
 նին, ինչ ասված ե այդ զեկուցումնե-  
 րում տարածայնությունների մասին,  
 յես վոչինչ չունեմ ավելացնելու : Յե-  
 թե դուք այդ դոկումենտները չունեք,  
 յես կարող եմ ճարել դրանք ձեզ հա-  
 մար : (Պատվիրակությունը հաղորդում  
 ե, վոր ինքն ունի այդ դոկումենտնե-  
 րը) :

Պատվիրակներից մեկը : Մեր վերա-  
 դարձին մեզ կհարցնեն այդ տարածայ-  
 նությունների մասին, բայց մենք չու-

նենք բոլոր զօկումենաները: Որինակ,  
մենք չունենք «ՏՅ»-ի պլատֆորմը:

ՄՏԱԼԻՆ: Յես այդ պլատֆորմը չեմ  
ստորադրել: Յես իրավունք չունեմ  
տնօրինություն անելու ուրիշների դո-  
կումենտների նկատմամբ: (Ծիծաղ):

Գ-րդ ՀԱՐՅ: Կապիտալիստական յեր-  
կրքներում արտադրության զարգացման  
հիմնական մղումը հիմնված է շա-  
հույթ ֆաղելու հույսի վրա: Այդ  
մղումը, իհարկե, հարաբերաբար, բա-  
ցակայում է ԽՍՀՄ մեջ: Ի՞նչն է փո-  
խարինում դրան, և այդ փոխարինու-  
մը, ձեր կարծիքով, վո՞րքան եֆեկ-  
տավոր է: Արդյո՞ք նա կարո՞ղ է մնա-  
յուն լինել:

ՊԱՏԱՍԽԱՆ: Այդ ձիշտ է, վոր  
կապիտալիստական տնտեսության հիմ-  
նական շարժիչը շահույթ քաղելն է:  
Ձիշտ է նույնպես և այն, վոր շա-  
հույթ քաղելը մեր սոցիալիստական  
արդյունաբերության վո՞չ նպատակն է

հանդիսանում, վո՛չ ել շարժիչը :  
Ասլա աշտպիսի դեպքում ի՞նչն և մեր  
ինդուստրիայի շարժիչը հանդիսանում :

Ամենից առաջ՝ այն հանգամանքը,  
վոր Փարբիկաներն ու զործարանները  
մեզանում պատկանում են ամբողջ  
ժողովրդին և վոչ թե կապիտալիստնե-  
րին, վոր Փարբիկաներն ու զործարան-  
ները կառավարում են վո՛չ թե կապի-  
տալիստների կամակառարները, այլ  
բանվոր դասակարգի ներկայացուցիչ-  
ները : Այն բանի գիտակցությունը,  
վոր բանվորներն աշխատում են վո՛չ  
թե կապիտալիստի համար, այլ իրենց  
սեփական պետության համար, իրենց  
սեփական դասակարգի համար, — այս  
գիտակցությունը հսկայական շարժիչ  
ուժ և հանդիսանում մեր արդյունա-  
բերության զարգացման ու կատարելա-  
գործման գործում : Հարկավոր և նշել,  
վոր Փարբիկաների ու զործարանների  
գիրեկտորների հսկայական մեծամաս-  
նությունը մեզանում բանվորներն են,



վորոնց նշանակում և ժողովրդական  
Տնտեսութեան Գերադուլն Սորհուրդը՝  
համաձայնեցնելով արհմիությունների  
հետ, ընդվորում գիրեկտորներից վոչ  
մեկը չի կարող իր պոստում մնալ  
բանվորների կամ համապատասխան  
արհմիությունների կամ քին հակառակ։  
Այնուհետև հարկ և նշել, վոր յուրա-  
քանչյուր գործարանում կամ Փարբի-  
կայում կա իր գործարանային կամ  
Փարբիկային կոմիտեն, վորին բանվոր-  
ներն են ընտրում, և վորը վերահսկո-  
ղության և յենթարկում ձեռնարկու-  
թյան աղմինիստրացիայի գործունեյու-  
թյունը։ Հարկ և, վերջապես, նշել,  
վոր յուրաքանչյուր արդյունաբերական  
ձեռնարկության մեջ կան բանվորների  
արտադրական խորհրդակցություններ,  
ուր մտնում են տվյալ ձեռնարկության  
բոլոր բանվորները, և վորտեղ բան-  
վորներն ստուգում են ձեռնարկության  
գիրեկտորի ամբողջ աշխատանքը,  
քննարկում են գործարանի աղմինիս-

արացիայի աշխատանքի սլանը, նշում են սխալներն ու թերությունները և հնարավորություն ունեն այդ թերություններն ուղղելու արհմիությունների միջոցով, կուսակցության միջոցով, Խորհրդային իշխանության որդանների միջոցով: Դժվար չե հասկանալ, վոր բոլոր այս հանդամանքներն արմատապես փոխում են ինչպես բանվորների դրությունը, այնպես ել կարգ ու կանոնը ձեռնարկության մեջ: Յեթե կապիտալիզմի որով բանվորը Փարբիկան դիտում ե վորպես բանտ, ասլա խորհրդային կարգերում բանվորը Փարբիկային նայում ե արդեն վո՛չ թե վորպես բանտի, այլ վորպես իր համար մոտիկ ու հարազատ մի բանի, վորի զարգացմամբ ու բարելավմամբ նա կենսականորեն շահագրգռված ե: Հազիվ թե հարկ կա ասլացուցելու, վոր բանվորների այս նոր վերաբերմունքը դեպի ձեռնարկությունը, բանվորների այս մոտիկության զգացմունքը դեպի

ձեռնարկութիւնը, մեր ամբողջ արդ-  
շուանաբերութեան մեծագույն շարժիչն  
է: Այս հանդամանքով պետք է բացա-  
տրել այն վիաստը, վոր որեցոր աճում  
է արտադրութեան տեխնիկայի բնագա-  
վառի՝ բանվորներից յեւած դյուտա-  
բարների ու արդյունաբերութեան կադ-  
մակերպիչների քանակը:

Յերկրորդ՝ այն հանդամանքը, վոր  
արդյունաբերութիւնից ստացվող յե-  
կամուտները մեղանում դնում են վո՛չ  
թէ առանձին անհատների հարստաց-  
ման, այլ արդյունաբերութեան հետա-  
դա ընդլայնման համար, բանվոր դա-  
սակարգի նյութական ու կուլտուրական  
դրութեան բարելավման համար, ինչ-  
պես բանվորներին, այնպես ել դյուղա-  
ցիներին անհրաժեշտ արդյունաբերա-  
կան սպրանքների եժանացման, այսին-  
քըն՝ դարձյալ աշխատավոր մասսաների  
նյութական դրութեան բարելավման  
համար: Կապիտալիստը չի կարող իր  
յեկամուտները հատկացնել բանվոր

դասակարգի բարեկեցութեան բարձրացմանը: Նա շահույթների համար է ապրում: Այլապես նա կապիտալիստ չէր լինի: Նա շահույթներ է քաղում, վորպեսզի զբանք զուժարի-դարձնի ավելադիր կապիտալ և արտահանի ավելի նվազ զարգացած յերկրները, վորոնք տառապում են կապիտալների պակասութեանից, նոր, ե՛լ ավելի խոշոր շահույթներ քաղելու նպատակով: Այսպես կապիտալները Հյուսիսային Ամերիկայից հոսում են Չինաստան, Ինդոնեզիա, Հարավային Ամերիկա, Յեմբուրա, Պրանսիայից — Փրանսական գաղութները, Անգլիայից—անգլիական գաղութները: Մեզանում բանն այլ է, վորովհետև մենք գաղութային քաղաքականութեան չենք վարում ու այգապիսին չենք ընդունում: Մեզանում արդյունաբերութեանից ստացվող յեկամուտները մնում են յերկրում ընդունարիայի հետագա ընդլայնման գործի համար, բանվորների զբուրթյան

րարեւելալման դործի համար, արդյուն-  
 նարեւրահան ապրանքների եժանացման  
 միջոցով ներքին շուկայի, այդ թվում  
 դյուղացիական շուկայի տարողություն-  
 նը բարձրացնելու դործի համար: Ար-  
 դյունարեւությունից ստացվող շա-  
 հույթների 10 տոկ. մեզանում դործա-  
 դրվում է բանվոր դասակարգի կենցա-  
 ղի րարեւելման վրա: Բանվորների  
 դրամական աշխատավարձի 13 տոկոսը  
 մեզանում դործադրվում է բանվոր  
 դասակարգին պետության հաշվին ապա-  
 հովազելու վրա (դա տարեկան 800  
 միլիոն ուրլուց ավելի յե կազմում):  
 Յեկամուսանների վորոչ մասը (յես հիմա  
 չեմ կարող ասել—հատկապես վոր  
 մասը) դործադրվում է կուլտուրական  
 կարիքների, Փորրիկադործարանային  
 աշակերտության ու բանվորների ար-  
 ձակուրդների վրա: Այդ յեկամուսանե-  
 րի բաւական նշանակալի մասը (յես  
 հիմա դարձյալ չեմ կարող ասել—հատ-  
 կապես վոր մասը) դործադրվում է

բանվորների դրամական աշխատավարձի ամենամյա բարձրացման վրա: Արդյունաբերությունից ստացվող՝ յեկամուտների մնացած մասը ծախսվում է արդյունաբերության հետադա ընդլայնման վրա, հին դործարանների նորոգման վրա, նոր դործարանների կառուցման վրա, վերջապես, արդյունաբերական ապրանքների եփանացման վրա: Այս հանդամանքների հսկայական նշանակությունը մեր ամբողջ արդյունաբերության համար այն է, վոր աս) նրանք հեշտացնում են դյուղատնտեսության մերձեցումն ինդուստրիայի հետ և քաղաքի ու դյուղի միջև յեղած հակադրությունների հարթումը. բ) նրանք նպաստում են ներքին—քաղաքային ու դյուղական—չուկայի տարողության աճմանը՝ հենց դրանով էլ անընդհատ աճող բազա ստեղծելով ինդուստրիայի հետադա ծավալման համար:

Վերջապես՝ այն հանդամանքը, վոր

արդյունարեւության ազդայնացման  
վաստը հեշտացնում է ի մի առած  
ամբողջ արդյունարեւական անտեսու-  
թյան պլանային վարումը:

Մեր արդյունարեւության այս ազ-  
դակներն ու շարժիչները մշտական  
դործոններ կլինեն<sup>օ</sup>ն արդյոք: Արդյոք  
ներանք կարո՞ղ են մշտապես դործող  
Ֆակտորներ լինել: Այո՛, ներանք  
անսպաճման կլինեն մշտապես դործող  
ազդակներ ու շարժիչներ: Յեւ վոր-  
քան ավելի դարդանս մեր ինդուս-  
տրիան, այնքան ավելի յեն աճելու  
այդ դործոնների ուժն ու նշանակու-  
թյունը:

7-րդ ՀԱՐՑ: ԽՍՀՄ-ն ի՞նչ չափով  
կարող է համագործակցել այլ յերկր-  
ների կապիտալիստական արդյունարե-  
րության հետ: Կա՞ արդյոք վորոշ  
սահման այդպիսի համագործակցության  
համար, թե՞ դա սոսկ մի փորձ է՝  
պարզելու համար, թե վո՞ր մասում



ի՛նչպիսի համագործակցութիւնն է  
հնարավոր և վո՛ր մասում՝ վոչ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Խո՞քք, յերևի, վերա-  
բերում ե կապիտալիստական սկսու-  
թյունների հետ արդիունարեւության  
բնագալառում, սուկտրի բնագալառում  
և, գուցե, դիվանագիտական հարաբե-  
րությունների բնագալառում ժամանա-  
կավոր համաձայնություններ կնքելուն:  
Յես կարծում եմ, վոր յերկու հակա-  
դիր սխտեմներէ—կապիտալիստական  
սխտեմի ու սոցիալիստական սխտե-  
մի—առկայությունը չի րացառում  
այդպիսի համաձայնությունների հնա-  
րավորությունը: Յես կարծում եմ,  
վոր այդպիսի համաձայնությունները  
հնարավոր ու նպատակահարմար են  
խաղաղ զարգացման պայմաններում:  
Արտահանությունն ու ներմուծումն  
ամենահարմար հողն են այդպիսի հա-  
մաձայնությունների համար: Մեզ հար-  
կավոր են՝ սարքավորում, հումք



(որինակ՝ բամբակ), կիսաֆարրիկատներ (մետաղի և ալյն), իսկ կապիտալիստներն այդ սպրանքների վաճառահանման կարիք ունեն։ Ահա ձեզ համաձայնության հող։ Կապիտալիստներին հարկավոր են՝ նավթ, փայտեղեն, հացամթերքներ, իսկ մեզ անհրաժեշտ է վաճառահանել այդ սպրանքները։ Ահա ձեզ համաձայնության համար դարձյալ մի հող։ Մեզ վարկեր են հարկավոր, կապիտալիստներին հարկավոր են լավ տոկոսներ այդ վարկերի համար։ Ահա ձեզ ելի մեկ հող համաձայնության համար՝ արդեն վարկի դժով, ընդվորում հայտնի յե, վոր խորհրդային որդանները վարկերի վերարերմամբ ամենաճշտապահ վճարողներն են։

Նույն այդ բանը կարելի յե ասել դիվանագիտական բնադավառի մասին։ Մենք խաղաղության քաղաքականություն ենք վարում և մենք պատրաստ ենք փոխադարձ չհարձակման պակտեր

ստորագրելու բուրժուական պետու-  
թյուններէ հետ: Մենք խաղաղության  
քաղաքականություն ենք վարում և  
մենք սլատրաստ ենք զինաթափման վե-  
րաբերյալ համաձայնության դիմելու՝  
ընդհուպ մինչև մշտական բանակներէ  
լիակատար վոչնչացումը, վորի մասին  
մենք ամբողջ աշխարհի առաջ հայտա-  
բարել ենք դեռևս ճենովայի կոնֆերեն-  
ցիայում: Ահա ձեզ հող դիվանագիտա-  
կան դժով համաձայնության համար:

Այդ համաձայնություններէ սահման-  
ները: Սահմանները դրվում են յերկու  
սխտեմներէ հակադրությամբ, — սխ-  
տեմներ, վորոնց միջև տեղի յե ունե-  
նում մրցակցություն, սլայքար: Այն  
չըջանալներում, վոց այդ յերկու սխ-  
տեմներն են թույլ տալիս, բայց միայն  
այդ շրջանակներում, համաձայնու-  
թյունները լիովին հնարավոր են: Այդ  
մասին ե խոսում Գերմանիայի, Իտա-  
լիայի, Ճապոնիայի և այլոց հետ կըն-  
քած համաձայնություններէ վորձը:

Արդյոք այդ համաձայնությունները սոսկ Լքսպերիմենտ են, թե նրանք կարող են ունենալ ավելի կամ պակաս յերկարատև բնույթ: Դա կախված է վո՛չ միայն մեզանից, դա կախված է նույնպես մեր կոնտրադենտներից (պայմանավորվող կողմերից): Դա կախված է ընդհանուր իրադրությունից: Պատերազմը կարող է գլխիվայր շուտալ բոլոր ու ամեն տեսակի համաձայնությունները: Դա կախված է, վերջապես, համաձայնության պայմաններից: Ստրկական պայմաններ մենք չենք կարող ընդունել: Մենք համաձայնություն ունենք Հարրիմանի հետ, վորը չահագործում է մանգանի հանքերը վրաստանում: Համաձայնությունը կնքված է 20 տարով: Ինչպես տեսնում եք, բոլորովին ել փոքր ժամանակ չէ: Մենք համաձայնություն ունենք նույնպես Լենս-Գոլդֆիլդս ընկերության հետ, վորը վոսկի յե արդյունահանում Սիրիբում: Համաձայնությունը կնքված

ե 30 տարով, — ե՛լ ավելի յերկարատե մի ժամկետով: Վերջապես, համաձայնություն կա Ճապոնիայի հետ՝ Սախալինում նավթաղբյուրներն ու ածխահանքերը շահագործելու վերաբերյալ:

Մենք կցանկանայինք, վոր այս համաձայնություններն ունենան քիչ թիւ շատ հաստատուն բնույթ: Բայց այդ կախված է, իհարկէ, վո՛չ միայն մեզանից, այլև մեր կոնտրադենտներից:

8-րդ ՀԱՐՑ: Վորո՞նք են Ռուսաստանի հիմնական տարբերությունները կապիտալիստական պետություններից այն փաղափականության մեջ, վոր նա վարում է ազգային փոքրամասնությունների նկատմամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Խոսքը, յերևի, վերաբերում է ԽՍՀՄ այն ազգություններին, վորոնց առաջներում ցարիզմն ու ոռոսական շահագործող դասակարգերը կեղեքում էին, և վորոնք չունեին իրենց պետականությունը: Հիմնական տարբե-

բությունն այն է, վոր կապիտալիստա-  
կան պետություններում գոյություն ու-  
նեն ազգային ճնշում ու ազգային  
ստրկացում, իսկ մեզանում, ԽՍՀՄ  
մեջ, արմատապես վոչնչացված են թե՛  
մեկը, թե՛ մյուսը: Սյնտեղ, կապիտա-  
լիստական պետություններում, առաջին  
կարգի ազգերի՝ արտոնյալ ազգերի,  
«պետական» ազգերի կողքին գոյություն  
ունեն յերկրորդ կարգի ազգեր, «վոչ-  
պետական» ազգեր, վոչ-լիերավ ազգեր,  
վորոնք զրկված են այս կամ այն իրա-  
վունքներից և, ամենից առաջ, պետա-  
կան իրավունքներից: Մեզանում,  
ԽՍՀՄ մեջ, ընդհակառակը, վոչնչաց-  
ված են ազգային անհավասարության  
և ազգային ճնշման բոլոր այդ ստրի-  
բուտները: Մեզանում բոլոր ազգերն ի-  
րավահավասար են ու սուվերեն, վո-  
րովհետև առաջներում տիրապետող վե-  
լիկոոս ազգի՝ ազգային ու պետական  
արտոնությունները վոչնչացված են:  
Բանն, իհարկե, չի վերաբերում ազգու-

Թյունների համադարձության վերարե-  
բյալ դեկլարացիաներին: Ազգային հա-  
վասարության վերարեբյալ դեկլարա-  
ցիաներ քիչ չունեն ամեն տեսակի  
բուրժուական ու սոցիալ-դեմոկրատա-  
կան կուսակցությունները: Ի՞նչ արժեք  
ունեն դեկլարացիաները, յեթե նրանք  
չեն կիրառվում կյանքում: Բանն այն  
է, վոր վոչնչացնենք այն դասակարգե-  
րը, վորոնք ազգային ճնշման կրողնե-  
րը, ստեղծիչներն ու կիրառողներն են:  
Այդպիսի դասակարգեր եյին մեզ մոտ  
կալվածատերերը, կապիտալիստները:  
Մենք տապալեցինք այդ դասակարգե-  
րին և հենց դրանով վոչնչացրինք ալ-  
դային ճնշման հնարավորությունը: Յեւ  
հենց այն պատճառով, վոր մենք տա-  
պալեցինք այդ դասակարգերին, իսկա-  
կան ազգային համադարձությունը մեզ  
մոտ հնարավոր դարձավ: Հենց այս է,  
վոր մեզանում կոչվում է ազդություն-  
ների ինքնորոշման զապախարի  
իրականացումն ընդհուպ մինչև

անջատուժը: Հենց այն պատ-  
ճառով, վոր մենք իրականացրել  
ենք ազդությունների ինքնորոշումը,  
հենց այդ պատճառով եւ մեզ հաջող-  
վեց դուրս վանել ԽՍՀՄ տարբեր ազ-  
դությունների աշխատավոր մասսաների  
փոխադարձ անվստահությունը, և ազ-  
դությունները կամավորության հի-  
մունքներով միավորել վորպես մի  
միութենական պետություն: Ներկա-  
յումս դոյություն ունեցող Խորհրդա-  
յին Սոցիալիստական Հանրապետու-  
թյունների Միությունը մեր ազգային  
քաղաքականության արդյունքն է և այն  
բանի արտահայտությունը, վոր ԽՍՀՄ  
ազդությունները հստակամ կերպով  
Ֆեդերացիա յեն կազմել վորպես մի  
միութենական պետություն: Հաղիվ թե  
հարկ կա ասպացուցելու, վոր այսպիսի  
քաղաքականությունն ազգային հարցում  
անբեկակայելի յե կապիտալիստական  
յերկրներում, վորովհետև այնտեղ դեռ-  
ևս իշխանության ղլուխ են կանգնած

Կապիտալիստները, վարոնք ազդային  
 ճնշման քաղաքականութեան ստեղծիչ-  
 ներն ու կիրառողներն են: Չի կարելի  
 չնշել, որինակ, այն փաստը, վոր  
 ԽՍՀՄ բարձրագույն որդանի,—Սոր-  
 հուրդների կենտրոնական Գործադիր  
 կոմիտեյի,—դուրս ե կանգնած վո՛չ թե  
 անպայման ոուս նախագահ, այլ վեց  
 նախագահներ՝ ԽՍՀՄ մեջ միավորված  
 վեց դաշնակից հանրապետութեանների  
 թվի համաձայն, վորոնցից մեկը ոուս  
 ե (կալինին), մյուսը—ուկրաինացի  
 (Պետրովսկի), յերրորդը—բելոուս  
 (Չերվյակով), չորրորդը—ադրբեջանցի  
 (Մուսաբեկով), հինգերորդը—թուրքմեն  
 (Այթակով), վեցերորդը—ուզբեկ (Ֆայ-  
 դուլլա Սոջայեվ): Այս փաստը մեր  
 ազդային քաղաքականութեան պայծառ  
 արտահայտութեաններից մեկն ե: Ինչ  
 ասել կուզի, վոր վոչ մի ըուրժուական  
 հանրապետութեան, թեկուզ նա ամե-  
 նադեմ ուկրատականը լինի, այսպիսի  
 քայլի չեր դիմի: Մինչդեռ այս քայլը



մեզ համար ինքնին հասկանալի մի  
փաստ է, վորը բղխում է ազգային հա-  
վասարության մեր ամբողջ քաղաքա-  
կանությունից :

Գ—րդ ՀԱՐՅ : Ամերիկյան բանվորական  
առաջնորդներն իրենց պայքարը կոմու-  
նիստների դեմ արդարացնում են յեր-  
կու հանգամանքով, 1) կոմունիստները  
ֆայֆայում են բանվորական շարժումը  
իրենց ֆրակցիոն պայքարով՝ միու-  
թյունների ներսում և իրենց հարձա-  
կումներով վոչ-նադիկալ պաշտոնատար  
անձերի վրա՝ արհմիություններում .  
2) ամերիկյան կոմունիստները կարգա-  
դրություններն ստանում են Մոսկվայից  
և այս պատճառով չեն կարող արհմիու-  
թեանական լավ գործիչներ լինել, վոր-  
չափով վոր նրանց լոյալությունը ո-  
տարերկրյա կազմակերպության նկատ-  
մամբ գերազանցում է իրենց միության  
նկատմամբ ունեցած նրանց լոյալու-  
թյունից : Այս դժվարությունն ի՞նչպես

կարող ե՞ վերացվել, վորպեսզի ամերիկյան կոմունիստները կարողանային միատեղ աշխատանք կատարել ամերիկյան բանվորական շարժման մյուս բջիջների հետ:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Յես կարծում եմ, վոր ամերիկյան բանվորական լիդերները այն փորձը, վոր նրանք անում են կոմունիստներին դեմ մղած իրենց պայքարն արդարացնելու համար, վոչ մի քննադատության չի դիմանում: Դեռ վոչ վոք չի ապացուցել ու չի ապացուցի, վոր կոմունիստները քայքայում են բանվորական շարժումը: Բայց դրա փոխարեն հարկավոր է լիովին ապացուցված համարել, վոր կոմունիստները բանվորական շարժման ամենանվիրված ու ամենախիղախ մարտիկներն են ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Ամերիկայում: Մի՞թե սա փաստ չէ, վոր բանվորների գործադուլների ու ցույցերի ժամանակ կոմունիստներն ըն-

Թանուժ են բանվոր դասակարգի առաջին շարքերում՝ իրենց վրա ընդունելով կապիտալիստների առաջին հարվածները, մինչդեռ սեփորմիտական բանվորական լիզերներն այդ ժամանակ թաղնվում են կապիտալիստների հետնարակերում (на задворках): Կոմունիստներն ի՞նչպես կարող են չքննադատել սեփորմիտական բանվորական լիզերների վախկտությունն ու հետադիմականությունը: Մի՞թե պարզ չէ, վոր այդպիսի քննադատությունը կարող է միայն աշխուժացնել ու ամրացնել բանվորական շարժումը: Ճշմարիտ է, այդպիսի քննադատությունը կործանում է հետադեմ բանվորական լիզերներին հեղինակավորությունը: Ե՛, այստեղ առանձին ինչ բան կա վոր: Բանվորական հետադեմ լիզերները թող պատասխանեն հալաքննադատությանը, և վոչ թե կոմունիստներին արհամիություններին դուրս վանդելով: Յես կարծում եմ, վոր Ամերիկայի բանվոր-

րական շարժումը, յեթե նա ցանկա-  
 նում ե ապրել ու ավելի դարդանալ,  
 չի կարող յուր դնալ առանց կարծիք-  
 ների ու հոսանքների պայքարի՝ արհ-  
 միությունների ներսում: Յես կարծում  
 եմ, վոր արհմիությունների ներսում  
 կարծիքների ու հոսանքների պայքարը,  
 հետադեմ լիդերներին քննադատելը և  
 այլն դնալով ավելի ու ավելի կաճեն,  
 ինչպես ել վոր դիմադրեն դրան ու-  
 ֆորմիստական բանվորական լիդերնե-  
 րը: Իսկ Ամերիկայի բանվոր դասա-  
 կարգին բացարձակապես անհրաժեշտ ե  
 կարծիքների այդպիսի պայքարն ու  
 այդպիսի քննադատությունը, վորպես-  
 ղի նա կարողանա տարբեր հոսանքների  
 մէջէն ընտրել իրեն կատարել ու վեր-  
 ջապես ինքնորոշվել վորպես ինքնու-  
 րույն կազմակերպված ուժ ամերիկյան  
 հասարակության ներսում: Ամերիկյան  
 ուֆորմիստական լիդերների դանդատ-  
 ները կոմունիստների դեմ լոկ այն են  
 վկայում, վոր նրանք համոզված չեն

իրենց արդարացի լինելուն, իրենց դրուժյունն ամուր չեն զլուծ: Հենց այս պատճառով է, վոր նրանք քննադատությունից վախենում են՝ ինչպես ժանտախտից: Ուշադրաւ է, վոր ամերիկյան բանվորական լիդերները տարրական դեմոկրատիայի սովելի վճռական հակառակորդներ են, քան շատ բուրժուաներ հենց նույն Ամերիկայում:

Միանգամայն սխալ է այն պնդումը, թէ ամերիկյան կոմունիստներն աշխատում են «Մոսկվայից յեկող կարգադրության համաձայն»: Աշխարհում դուք չեք գտնի այնպիսի կոմունիստներ, վորոնք համաձայնեյին գործել դրսից յեկող «կարգադրությունների համաձայն», իրենց համոզմունքների դեմ, իրենց կամքի դեմ, իրադրության ցուցումների հակառակ: Բայց այդպիսի կոմունիստները, յեթէ նրանք նույնիսկ վորեւէ տեղ գոյություն ունենային, գոռչ անգամ չեյին արժենա: Կո-

մոռնխտաններն ամենահամարձակ ու խի-  
զախ մարդիկ են, նրանք կռիվ են  
մղում մի ամբողջ ծով թշնամիների  
դեմ: Կոմունիստների արժեքն, իմիջի  
այլոց, հենց այն է, վոր նրանք կարո-  
ղանում են իրենց համոզմունքները  
սլաշտպանել: Այս պատճառով տարորի-  
նակ է ամերիկյան կոմունիստների մա-  
սին խոսել իբրև այնպիսի մարդկանց  
մասին, վորոնք իրենց համոզմունքները  
չունեն և ընդունակ են գործելու միայն  
դրսից արվող «կարդադրություննե-  
րով»: Բանվորական լիգերները պնդու-  
մի մեջ ճիշտ է միայն մի բան՝ հենց  
այն, վոր ամերիկյան կոմունիստները  
մտնում են կոմունիստների միջազգա-  
յին կազմակերպության մեջ և ժամա-  
նակ առ ժամանակ խորհրդակցում են  
այդ կազմակերպության կենտրոնի հետ  
այս կամ այն հարցերի շուրջը: Բայց  
այստեղ ի՞նչ վատ բան կա: Մի՞թե ա-  
մերիկյան բանվորական լիգերները ունի  
են միջազգային բանվորական կենտրոն

կազմակերպելու: Ճիշտ է, նրանք Ամստերդամի կազմի մեջ չեն մտնում: Բայց նրանք այնտեղ չեն մտնում վո'չ թե այն պատճառով, վոր նրանք միջազգային բանվորական կենտրոնին դեմ են, այլ այն պատճառով, վոր նրանք Ամստերդամը չափազանց ձախ կազմակերպություն են համարում: (Միծաղ): Ինչո՞ւ կապիտալիստները կարող են միջազգային մասշտաբով կազմակերպվել, իսկ բանվոր դասակարգը կամ բանվոր դասակարգի մի մասը չպետք է ունենան իրենց միջազգային կազմակերպությունը: Պարզ չէ՞ արդյոք, վոր Գրինն ու նրա բարեկամներն Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի՝ զրպարտում են ամերիկյան կոմունիստներին՝ սարկոբեն կրկնելով կապիտալիստների լեզենդաները «Մոսկվայից յեկող կարգադրությունները» մասին: Կան մարդիկ, վորոնք կարծում են, թե կոմունիստական Ինտերնացիոնալիստները Մոսկվայում բան ու գործ

են շինել միայն այն, վոր նստել են ու  
 դիրեկտիվներ են դրում բոլոր յերկր-  
 ների համար: Քանի՜ վոր կոմիստերնի  
 կազմի մեջ մտնող յերկրների քանակը  
 60-ից ավելի յե, ապա կարող եք  
 պատկերացնել ձեզ կոմիստերնի ան-  
 դամների դրուժյունը, վորոնք չեն  
 քնում, չեն ուտում և միայն բանձ  
 դործերն այն և, վոր նստել են ու գի-  
 շեր-ցերեկ դիրեկտիվներ են դրում այդ  
 յերկրների համար: (Միծաղ): Յե՛վ ա-  
 մերիկյան բանվորական լիդերները  
 մտածում են այս զվարճարլի լեզենդա-  
 յով քողարկել իրենց ահը կոմունիստ-  
 ների հանդեպ ու սքողել այն վաստը,  
 վոր կոմունիստներն Ամերիկայի բան-  
 վոր դասակարգի ամենահամարձակ ու  
 ամենանվիրաված աշխատողներն են:

Պատվիրակուժյունը հարցնում է, թե  
 վորն է յե՛քն այսպիսի դրուժյունից:  
 Յես կարծում եմ, վոր այստեղ մեկ  
 յե՛ք կա. թույլատրել կարծիքների ու  
 հոսանքների պայքարն Ամերիկայի



արհմիությունների ներսում, դէն դցել  
կոմունիստներին. արհմիություններից  
դուրս նեանելու հետանդեմ քաղաքակա-  
նությունը և Ամերիկայի բանվոր դա-  
սակարգին հնարավորություն տալ այդ  
հոսանքների միջև ազատ ընտրություն  
անելու, վորովհետև Ամերիկայում դեռ  
իրենց Հոկտեմբերյան հեղափոխություն-  
ը չի յեղել, և այնտեղ բանվորները  
դեռևս հնարավորություն չեն ունեցել  
վերջնական ընտրություն անելու տար-  
բեր հոսանքների միջև արհմիություն-  
ներում:

10-րդ ՀԱՐՑ: Արդյո՞ք ներկայումս  
դրամ ուղարկվում է Ամերիկա՝ ամե-  
րիկյան կոմկուսակցութեանը կամ  
«Դեյլի Ուորկըր» կոմունիստական լրա-  
գրին աջակցելու համար: Յեթե վոչ,  
ամերիկյան կոմունիստները տարեկան  
վո՞րքան անդամավարներ են մուծում  
III Ինտերնացիոնալ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Յեթե խոսքը վերաբե-

րում և Ամերիկայի կոմկուսակցութեան և  
 III Ինտերնացիոնալի փոխհարարերու-  
 թյուններին, ապա յես պետք և ասեմ,  
 վոր Ամերիկայի կոմկուսակցութեանը,  
 վորպես Կոմունիստական Ինտերնացիո-  
 նալի մի մասը, հավանորեն անդամակ-  
 ցական մուծումներ և վճարում կոմին-  
 տերնին, այնպես, ինչպես վոր կոմին-  
 տերնը, վորպես միջազգային կոմունիս-  
 տական շարժման կենտրոն, պետք և  
 կարծել, ուժերը ներածին չափով ա-  
 ջակցութեան և ցույց տալիս Ամերի-  
 կայի կոմկուսակցութեանը, յերբ այդ-  
 անհրաժեշտ և գտնում: Յես կարծում  
 եմ, վոր սրանում զարմանալի ու ար-  
 տասովոր վոչինչ չկա: Իսկ յեթե խոս-  
 քը վերաբերում և Ամերիկայի կոմկու-  
 սակցութեան և ԽՍՀՄ կոմկուսակ-  
 ցութեան փոխհարարութեաններին,  
 ապա յես պետք և հայտարարեմ, վոր  
 յես չգիտեմ վոչ մի դեպք, յերբ ամե-  
 րիկյան կոմկուսակցութեան ներկայա-  
 ցուցիչներն ողնութեան համար դիմած

լինեն ՍՍՀՄ կոմկուսակցութեանը: Դուք կարող եք այս տարրերնակ համարել, բայց սա մի վաստ է, վորը խոսում է ամերիկյան կոմունիստների չափազանց մեծ նրբանկատութեան մասին: Բայց ի՞նչ կլիներ, յեթե Ամերիկայի կոմկուսակցութեանը ողնութեան համար դիմեր ՍՍՀՄ կոմկուսակցութեանը: Յես կարծում եմ, վոր ՍՍՀՄ կոմկուսակցութեանն իր ուժերը ներածին չափ ողնութեան ցույց կտար նրան: Իրոք, ի՞նչ արժեք կունենար այն կոմկուսակցութեանը, այն ել իշխանութեան դլուխ կանգնած կոմկուսակցութեանը, յեթե նա իր ուժերը ներածի չափ ողնութեանը մերժեր կապիտալիզմի լծի տակ գտնվող՝ ուրիշ յերկրի կոմկուսակցութեանը: Յես կասեյի, վոր այդպիսի կոմկուսակցութեանը զոռն անգամ չեր արժենա: Յենթադրենք, թե ամերիկյան բանվոր դասակարգը, իր բուրժուազիային տապալելով, իշխա-

նության հասալ, յենթադրենք, թե Ամերիկայի բանվոր դասակարգին, վոր հաղթել և կապիտալիզմի դեմ մղած մեծ պայքարում, նրա ուժերի ներածիչտի նյութական ողնությանն և զիմում մի այլ յերկրի բանվոր դասակարգ, — արդյոք ամերիկյան բանվոր դասակարգը կկարողանա՞ր այդպիսի ողնությունը մերժել: Յես կարծում եմ, վոր նա իրեն խայտառակության կմատներ, յեթե տատանվեր ողնություն ցույց տալու:

11-րդ ՀԱՐՅ: Մենք գիտենք, վոր վորոշ լավ կոմունիստներ այնքան ի համաձայն չեն կոմկուսակցութեան այն պահանջին, վոր բոլոր նոր անդամներն անաստվածներ լինեն, վորովհետև ներկայումս հետադեմ հոգևորականութիւնը ճնշված է: Կոմկուսակցութիւնը կարող կլինե՞ր արդյոք ապագայում չեզոք լինել կրոնի նկատմամբ, վորն աջակցելիս լիներ ամբողջութեամբ վերց-

բաժնի քուսակալի գլխուքյանն ու ընդ-  
դիմակայելիս չլինելու կոմունիզմի:  
Դուք կարող կլինե՞՞յի՞ք արդյո՞ք ապա-  
գալուստ քուսակալի կուսակցութեան  
անդամներին կրոնական համոզմունքներ  
դավանել, յեթե այդ համոզմունքները  
տարբերաց չլինելիս կուսակցական լո-  
յալուքյան հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Այս հարցում միջանի-  
անճշտութեան կար: Նախ, յես չգիտեմ  
այնպիսի «լավ կոմունիստներ», վորոնց  
մասին այստեղ խոսում ե պատվիրա-  
կութեանը: Հազիվ թե առհասարակ  
այդպիսի կոմունիստներ դոյութեան  
ունենան ընդդէմ: Յերկրորդ,  
յես պետք ե հայտարարեմ, վոր Քոր-  
մալ կերպով ստած, մեզանում չկան  
կուսակցութեան անդամ ընդունելու  
այնպիսի պայմաններ, վորոնք կուսակ-  
ցութեան անդամութեան թեկնածուից  
պարտադիր անաստվածութեան պա-  
հանջելին: Կուսակցութեան մեջ ընդու-

Նեղու մեր սլայմաններն են՝ ընդունել  
կուսակցութեան ծրագիրն ու կանոնա-  
դրութեանը, անսլայման յենթարկվել  
կուսակցութեան ու նրա որդանների  
վճիռներին, անդամավճարներ տալ,  
մտնել կուսակցութեան կազմակերպու-  
թյուններից վորեւէ մեկի մեջ:

Պատվիրակներից մեկը: Յես շատ  
հաճախ եմ կարդում, վոր կուսակցու-  
թյունից վտարում են աստծուն հալա-  
տալու համար:

Ստալին: Յես կարող եմ միայն կըրկ-  
նել կուսակցութեան մեջ ընդունելու  
սլայմանների մասին արդեն ասածը:  
Ուրիշ սլայմաններ մենք չունենք:

Այդ նշանակում ե արդյոք, վոր  
կուսակցութեանը կրոնի նկատմամբ  
չեզոք ե: Վո՛չ, չի նշանակում: Մենք  
պրոսպագանդա յենք մղում ու պրոպա-  
գանդա յենք մղելու կրոնական նախա-  
պաշարմունքների դեմ: Յերկրի որեւո-  
ղութեանն այնպես ե, վոր ամեն մի  
քաղաքացի իրավունք ունի դավանելու

ցանկացած կրօնը: Դա յուրաքանչյուրի  
խղճի դործն է: Հենց այս պատճառով  
է, վոր մենք կիրառել ենք յեկեղեցու  
բաժանումը պետութիւնից: Բայց կի-  
րառելով յեկեղեցու բաժանումը պե-  
տութիւնից ու դավանանքի ազատու-  
թիւն հռչակելով՝ մենք դրա հետ  
մեկտեղ յուրաքանչյուր քաղաքացու  
իրավունք ենք վերապահել համոզելու  
միջոցով, պրոպագանդայի ու ագիտա-  
ցիայի միջոցով պայքարելու այս կամ  
այն կրօնի դեմ, ամեն մի կրօնի դեմ:  
Կուսակցութիւնը չի կարող չեղօք լի-  
նել կրօնի նկատմամբ, և նա հակա-  
կրօնական պրոպագանդա յե մղում բո-  
լոր ու ամեն տեսակ կրօնական նախա-  
պաշարմունքների դեմ, վորովհետև  
նա գիտութեանն է կողմնակից, իսկ  
կրօնական նախապաշարմունքները գի-  
տութեան դեմ են դնում, վորովհետև  
յուրաքանչյուր կրօն գիտութեանը հա-  
կադիր մի բան է: Այնպիսի դեպքեր,  
ինչպես Ամերիկայումն է, վորտեղ

մտա ժամանակներս դարվիճական-  
ներին դատաւարտեցին, մեզանում  
անհնարին են, վորովհետև կուսակցու-  
թյունը վարում է դիտությունն ամեն  
կերպ պաշտպանելու քաղաքականու-  
թյուն: Կուսակցությունը չի կարող  
չեզոք լինել կրօնական նախապաշար-  
մունքների նկատմամբ և նա պրո-  
պագանդա յե մղելու այդ նախապաշար-  
մունքների դեմ, վորովհետև դա շա-  
հադործող դասակարգերին աջակցող և  
այդ դասակարգերի նկատմամբ հնա-  
դանդություն քարոզող հետադեմ հո-  
գևորականության ազդեցությունը  
խախտելու ճիշտ միջոցներից մեկն է:  
Կուսակցությունը չի կարող չեզոք լի-  
նել կրօնական նախապաշարմունքներ  
կրողների նկատմամբ, աշխատավոր  
մասսաների դիտակցությունը թունա-  
վորող հետադեմ հոգևորականության  
նկատմամբ: Արդյոք մենք ճնշել ենք  
հետադեմ հոգևորականությանը: Այո՛,  
ճնշել ենք: Դժբախտությունն այն և



միայն, վոր նա դեռ լիովին լիկվիդա-  
ցիայի յենթարկված չէ: Հակակրօնա-  
կան սլոտադանդան այն միջոցն է, վո-  
րը սկտք է մինչև վերջը հասցնի հե-  
տադիմական հողեւորականությանը լիկ-  
վիդացիայի յենթարկելու գործը: Լի-  
նում են դեպքեր, վոր կուսակցության  
անդամներից վոմանք յերբեմն խանդա-  
րում են հակակրօնական սլոտադան-  
դան ամեն կերպ ծավալվելուն: Յեթե  
կուսակցության այսպիսի անդամներին  
վտարում են, ապա այդ շատ լավ է,  
վորովհետև այդպիսի «կոմունիստնե-  
րը» մեր կուսակցության շարքերում  
տեղ չունեն:

12-րդ ՀԱՐՅ: Դուք կարո՞ղ եք ալ-  
դոք համառոտակի տալ մեզ ապագա այն  
հասարակության բնութագիրը, վոր  
փորձում ե ստեղծել կոմունիզմը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Կոմունիստական հասա-  
րակության ընդհանուր բնութագիրը  
տրված է Մարքսի, Ենդելսի ու Լենինի-

նի աշխատություններում: Յեթե հա-  
 մառոտակի տանք կոմունիստական հա-  
 սարակության անատոմիան, ապա դա  
 կլինի այնպիսի հասարակություն,  
 ա) վորտեղ արտադրության դործիքնե-  
 րի ու միջոցների մասնավոր սեփակա-  
 նություն չի լինի, այլ կլինի հասարա-  
 կական, կուլեկտիվ սեփականություն.  
 բ) վորտեղ չեն լինի դասակարգեր ու  
 պետական իշխանություն, այլ կլինեն  
 ինդուստրիայի ու գյուղատնտեսության  
 աշխատավորներ, վորոնք տնտեսապես  
 կկառավարվեն վորպես աշխատավորնե-  
 րի ազատ ասոցիացիա. գ) վորտեղ  
 պլանով կազմակերպված ժողովրդա-  
 կան տնտեսությունը կխարսխալի բարձ-  
 րագույն տեխնիկայի վրա՝ ինչպես ին-  
 դուստրիայի բնագավառում, այնպես  
 ել գյուղադատնտեսության բնագավա-  
 րում. դ) վորտեղ քաղաքի ու գյուղի  
 միջև, ինդուստրիայի ու գյուղատնտե-  
 սության միջև հակադրություն չի լի-  
 նի. ե) վորտեղ մթերքները կբաշխվեն

Ֆրանսահան հին կոմունիստների սկզբ-  
բունքով՝ «յուրաքանչյուրից ըստ իր  
ընդունակությունների, յուրաքանչյու-  
րին ըստ իր սահանջմունքների».  
դ) վորտեղ գիտությունն ու արվեստը  
լիակատար ծաղկման հասնելու համար  
բավականաչափ բարենպաստ սլայման-  
ներ կլայելեն. է) վորտեղ անհատը  
ազատ լինելով մի կտոր հացի հոգսե-  
րից ու «աշխարհի ուժեղների» հար-  
մարվելու անհրաժեշտությունից՝ իս-  
կապես ազատ կլինի: Յեվ այլն և  
այլն: Պարզ և, վոր մենք դեռ հեռու  
յենք այսպիսի հասարակությունից:

Ինչ վերաբերում և կոմունիստական  
հասարակության լիակատար հաղթա-  
նակի համար անհրաժեշտ միջազգային  
սլայմանների, ապա դրանք կդոյանան  
ու կաճեն՝ կապիտալիստական յերկըր-  
ներում հեղափոխական ճգնաժամերի  
ու բանվոր դասակարգի հեղափոխական  
պոռթկումների աճմանը զուգընթաց:  
Զի կարելի բանն այնպես պատկերաց-

նեւ, վոր մի յերկրի կամ միջանի յերկրներէ բանվոր դասակարգը կընթանա դեպի սոցիալիզմ և մանավանդ դեպի կոմունիզմ, իսկ մյուս յերկրներէ կասալիտալիստներն անտարբեր կնայեն դրան ու ձեռքները ծալած կնստեն: Առավել ևս չի կարելի պատկերացնել, վոր բանվոր դասակարգը կասալիտալիստական յերկրներում կհամաձայնի լինել այս կամ այն յերկրում սոցիալիզմի հաղթական զարգացման սոսկ զիտողը: Իրոք կասալիտալիստները կանեն իրենցից կախված ամեն բան, վորպեսզի խեղդեն այդպիսի յերկրներին: Իրոք յուրաքանչյուր լուրջ քայլին դեպի սոցիալիզմը և մանավանդ դեպի կոմունիզմն այս կամ այն յերկրում անխուսափելիորեն ուղեկցելու յե կասալիտալիստական յերկրներէ բանվոր դասակարգի անզուսպ խոյանքը՝ դիկտատուրա ու սոցիալիզմ նվաճելու այդ յերկրներում: Այսպիսով՝ միջազգային հեղափոխութեան հետագա զարգացման

ընթացքում կկազմավորվի համաշխարհային մասշտաբի յերկու կենտրոն-սոցիալիստական կենտրոն, վորը դեպի ինքն և ձգում սոցիալիզմին ձգտող յերկրները, և կապիտալիստական կենտրոն, վորը դեպի ինքն և ձգում կապիտալիզմին ձգտող յերկրները: Այդ յերկու կենտրոնի կռիվը համաշխարհային տնտեսությանը տիրանալու համար՝ վճռելու յե կապիտալիզմի և կոմունիզմի բախտն ամբողջ աշխարհում: Վորովհետև համաշխարհային կապիտալիզմի վերջնական պարտությունը սոցիալիզմի հաղթությունն և համաշխարհային տնտեսության ասպարեղում:

## II

### ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ստալին: Յեթե պատվիրակութիւններ չատ չի հոգնել, ապա յետ թույլտւություն կ'ընդրեյի իմ հերթին նրան մի քանի հարց տալու: (Պատվիրակութիւնը հայտնում է իր համաձայնութիւնը):

1-ին ՀԱՐՑ: Ինչո՞վ է բացատրվում բանվորների արհեստակցական կազմակերպվածութեան փոքր տոկոսն Ամերիկայում: Կարծե՞մ՝ այնտեղ 17 միլիոն ինդուստրիալ բանվոր կա: (Պատվիրակները տեղեկանք են տալիս, վոր 18-ից մինչև 19 միլիոն ինդուստրիալ բանվոր կա): Կազմակերպված է, կարծե՞մ, մոտ 3 միլիոն: (Պատվիրակները տեղեկանք են տալիս, վոր Աշխատանքի

Ամերիկյան Ֆեդերացիայում հաշվվում  
է մոտավորապես 3 միլիոն կազմա-  
կերպված բանվոր և, բացի դրանից,  
այլ միություններում կա կես միլիոն  
կազմակերպված բանվոր, այդպիսով  
ընդամենը կա 3½ միլիոն կազմակերպ-  
ված բանվոր): Յես անձամբ գտնում  
եմ, Վոր սա արհմիություններում  
կազմակերպված բանվորների շատ փոքր  
տոկոս է: Մեզանում ԽՍՀՄ մեջ,  
արհմիություններում կազմակերպված  
է յերկրի բոլոր պրոլետարների 90 տո-  
կոսը: Յես ուզում եմ հարցնել պատ-  
վիրակութային, արդյոք նա դրակա՞ն  
փաստ է համարում բանվորների այս  
համեմատաբար քիչ կազմակերպված  
լինելն արհմիություններում: Պատվի-  
րակությունը չի՞ կարծում արդյոք,  
վոր այս փաստը խոսում է ամերիկյան  
պրոլետարիատի թուլության մասին,  
կապիտալիստների դեմ տնտեսական  
բնագավառում պայքարելու նրա գոր-  
ծիքների թուլության մասին:

Բրոֆիլ: Արհեստակցական միություն-  
 ների փոքրագիծի վրէնէլը հարկավոր և  
 բացատրել վճի թե արհեստակցական  
 կազմակերպություններում դոյություն  
 ունեցող անհաջող տակտիկայով, այլ  
 յերկրի ընդհանուր անտեսական պայ-  
 մաններով, վորոնք բանվորների ամ-  
 բողջ մասսային չեն դրդում դեպի  
 կազմակերպություն և, անտեսական  
 այդ պայմանների բարենպաստության  
 շնորհիվ, նեղացնում են կապիտալիստ-  
 ների դեմ բանվոր դասակարգի պայ-  
 քարի անհրաժեշտությունը: Այդ պայ-  
 մաններն, իհարկե, փոխվելու յեն և  
 այդ պայմանների փոխվելուն դուրա-  
 հեռ՝ արհմիություններն փճելու յեն,  
 և ամբողջ արհշարժումն այլ ուղիով  
 կընթանա:

Դուգլաս: Համաձայն եմ այն բացա-  
 արությանը, վոր ամէկ նախորդ հոե-  
 տորը: Դրան կալելացնեմ, վոր, նախ,  
 հարկավոր է նկատի ունենալ այն մո-  
 մենտը, վոր վերջին ժամանակներս



Միացյալ Նահանգներում իրենք կա-  
պիտալիստները խիստ շատ են բարձ-  
րացնում աշխատավարձը: Աշխատա-  
վարձի բարձրացման այս պրոցեսը  
նկատվում էր 1917 թվականին, 1919  
թվականին և ավելի ուշ: Յեթե համե-  
մատենք ներկայումս դոյություն ունե-  
ցող ուեալ աշխատավարձն այն աշխա-  
տավարձի հետ, վոր դոյություն ուներ  
1911 թվականին, սպա դուրս կգա,  
վոր այն նշանակալիորեն ավելի բարձր  
է: Արհարթումն իր զարգացման պրո-  
ցեսում սկզբում կառուցվում էր և  
այժմ էլ կառուցվում է ըստ ցեխային  
հատկանիշի, ըստ պրոֆեսիայի հատ-  
կանիշի, և արհմիություններն ստեղծ-  
վել են առավելարար վորակյալ բան-  
վորների համար: Այդ միություններին  
դուրս են կանգնել վորոշ առաջնորդ-  
ներ, վորոնք վիակ կազմակերպություն  
են ներկայացրել ու ձգտել են լավ  
պայմաններ ձեռք բերելու իրենց ան-  
դամների համար: Արհեստակցական

միութեաններէ շրջանակներն ընդլայ-  
նելու և անսրակ բանվորներին արհ-  
միութեաններում կազմակերպելու հա-  
մար դրդապատճառներ նրանք չեն ու-  
նեցել: Բացի դրանից ամերիկյան արհ-  
շարժումն ստիպված է հաշվի առնել  
չատ լայ կազմակերպված կապիտա-  
լիզմը, վորն իր տրամադրութեան տակ  
ունի բոլոր միջոցները, վորպէսզի  
հակազդի արհեստակցական միութեան-  
ներում բոլոր բանվորներէ կազմա-  
կերպվելուն: Յեթե, ասենք, տրեստաց-  
ված արտադրութեանն իր ձեռնարկու-  
թեաններէ մեկնումեկում հանդիպում  
և արհմիութեան չափազանց ուժեղ դի-  
մադրութեան, նա դիմում է մինչև  
իսկ այնպիսի միջոցի, ինչպիսին այդ  
ձեռնարկութեանը փակելը և աշխա-  
տանքն իր մի այլ ձեռնարկութեանը  
փոխադրելն է: Այսպիսով ջախջախ-  
վում է արհեստակցական միութեան  
դիմադրութեանը: Ամերիկյան կապի-  
տալիզմն ինքնուրույնաբար բարձրաց-

նու՛մ և բանվորներէ՛ աշխատավարձը,  
 բայց ընդամին վոչ մի տնտեսական իշ-  
 խանություն չի տալիս, նրանց կյանքի  
 տնտեսական բարելավման համար սլայ-  
 քարելու հնարավորություն չի տալիս :  
 Հետևյալ շատ կարևոր հանդամանքն  
 Ամերիկայում այն է, վոր կապիտա-  
 լիստները տարբեր ազգությունների  
 պատկանող բանվորներէ՛ միջև դժտու-  
 թյուն են սերմանում : Մեծ մասամբ  
 անորակ բանվորներ Յելրոսայից յե-  
 կած՝ բանվորներն են կամ, վերջին ժա-  
 մանակներս, նեգր՝ բանվորները : Կապի-  
 տալիստներն՝ աշխատում են դժտու-  
 թյուն սերմանել զանազան ազգու-  
 թյունների պատկանող բանվորներէ՛ մի-  
 ջև : Ըստ ազգությունների կատարվող  
 այդ բաժանումը տեղի յե ունենում  
 նաև վորակյալ ու անորակ աշխատան-  
 քի հատկանիշով : Կապիտալիստները  
 սխտեմատիկաբար հակամարտություն  
 են սերմանում. տարբեր ազգություննե-  
 րի պատկանող բանվորներէ՛ միջև, ան-

կախ նրանց աշխատանքի վորակավորութիւնից: Վերջին 10 տարում ամերիկյան կապիտալիզմն ավելի լուսավորված քաղաքականութիւն է վարում այն տեսակետից, վոր իր արհեստակցական, այսպես կոչված կոմսականական միութիւններն է ստեղծում: Նա բանվորներին դրամում է դեպի իր ձեռնարկութեան աշխատանքը, բանվորներին շահագրգռում է այդ ձեռնարկութեան շահույթներով և այլն: Ամերիկյան կապիտալիզմը հակում ունի հորիզոնական բաժանումը փոխարինելու ուղղաձիգ բաժանումով, այսինքն՝ ստանդարտելու բանվոր դասակարգը, դրամելով նրան ու շահագրգռելով հողատ կապիտալիզմի:

Կոյլ: Յես հարցին մոտենում եմ վո՛չ թե թեորիայի տեսակետից, այլ պրակտիկայի տեսակետից: Ճիշտ է, ամենից լայն այն է, վոր բանվորներին կադմակերպեն լավ ժամանակներում, բայց բանն այն է, վոր Աշխատանքի Ամե-

րիկյան Ֆեդերացիայի անդամների  
չարժման վիճակագրությունը ցույց է  
տալիս, Վոր Աշխատանքի Ամերիկյան  
Ֆեդերացիան աստիճանաբար կորցնում  
է անորակ բանվորներին ու իր կազմի  
մեջ ամբլացնում է վորակյալ բանվոր-  
ներին քանակը: Սյուպլիսով՝ Աշխատանքի  
Ամերիկյան Ֆեդերացիան ցանկանում է  
լինել և աստիճանաբար դադնում է մի  
կազմակերպություն, վորն իր կազմի  
մեջ ունի ղլխավորապես վորակյալ  
բանվորներ: Արհեստակցական շարժումն  
Ամերիկայում անորակ բանվորներին  
դրեթե չի ընդդրկում: Արդյունաբերու-  
թյան խոշոր ճյուղերն արհմիություն-  
ների կողմից չեն ընդդրկվում: Արդյու-  
նաբերության այդ խոշոր ճյուղերից  
միայն ամխի ու յերկաթուղային ար-  
դյունաբերության բանվորներն են վո-  
րոչ չափով կազմակերպված, և այն ել  
ածխարդյունաբերության մեջ աշխա-  
տում են 65 տոկ: չկազմակերպված  
բանվորներ: Արդյունաբերության այն-

պիսի ճյուղերի բանվորները, ինչպիսիք  
են պողպատաձուլակները, կաուչուկինը,  
ավտոմոբիլայինը, արհեստակցականու-  
րեն գրեթե բոլորովին կաղձակերսլած  
չեն: Կարելի չե ստել, վոր անորակ  
բանվորներին արհմիությունները չեն  
ընդգրկում: Աշխատանքի Ամերիկյան  
Ֆեդերացիայից դուրս կանգնած մի  
շարք արհեստակցական կաղձակերսու-  
թյուններ կան, վորոնք աշխատում են  
կաղձակերսել անորակ ու սակավորակ  
բանվորներին: Ինչ վերաբերում է Աշ-  
խատանքի Ամերիկյան Ֆեդերացիա  
առաջնորդների դիրքին, ապա առաջ-  
նորդներից մեկը, որինակ, մետաղա-  
դորժների արհմիության նախագահը,  
միանշամայն բացահայտ կերպով հայ-  
տարարել է, վոր ինքը չի ցանկանում  
անորակ բանվորներ գրավել իր միու-  
թյան մեջ: Արհմիությունների առաջ-  
նորդների նկատմամբ դրությունն այն-  
պես է, վոր ստեղծվել է առաջնորդնե-  
րի մի կաստա, վորը բաղկացած է մի-

քանի տասնյակ այնպիսի մարդկանցից,  
վորոնք ստանում են հսկայական  
գրույթներ—տարեկան մինչև 10 հազար  
դոլլար և ավելի, սակայն վե՛ր մի կաս-  
տա, ուր ներս ընկնելը չստիպանց  
դժվար է :

Գու՛նն : Այն հարցը, վոր գրեց ընկ.  
Ատալինը, անարդարացի յե գրված, վո-  
րովհետև, յեթե նրա յերկրում արհ-  
միություններում կազմակերպված է  
բանվորների 90 տոկ, ապա այստեղ  
իշխանությունը բանվոր դասակարգին  
և պատկանում, մինչևեռ կապիտալիս-  
տական յերկրներում բանվորները ճընշ-  
ված դասակարգ են, և բուրժուազիան  
ձեռք է առնում բոլոր միջոցները, վոր-  
պեսպի բանվորներին հնարավորություն  
չտա արհմիությունների մեջ կազմա-  
կերպվելու : Բացի գրանից, այնտեղ դո-  
յություն ունեն հետադիմական արհ-  
միություններ, վորոնց ղլուխ են կանգ-  
նած հետադեմ առաջնորդներ : Այն պայ-  
մաններում, վոր կան Ամերիկայում,

արհեստակցական միությունների դա-  
դափարն իսկ շատ դժվար և արժատա-  
վորեւ բանվորներին գլխում: Սա յե այն  
հանգամանքի պատճառը, վոր Ամերի-  
կայում այնքան քիչ են տարածված  
արհմիությունները:

Ստալին: Վերջին հոկտոբրն արդյոք  
համաձայն և նախորդ հոկտոբրների  
հետ, վոր Ամերիկայի բանվորական  
չարժման լիդերներին վոմանք - իրենք  
են աշխատում նեղացնել արհեստակցա-  
կան շարժումը:

Դուռն: Համաձայն եմ:

Ստալին: Յես չեյի ցանկանում  
վորևե մեկին վիրավորել: Յես միայն  
ցանկանում եյի պարզել ինձ համար  
գործերի դրության տարբերություն  
Ամերիկայում և ՍՍՀՄ մեջ: Յեթե յես  
վորևե մեկին վիրավորեցի, ներողու-  
թյուն եմ խնդրում: (Պատվիրակներն ի  
ծիծաղ):

Դուռն: Յես բնավ նեղացած չեմ:

Ստալին: Կա՞ր արդյոք Ամերիկայում



բանվորներին պետական ասպահովագրութ-  
թյան սխտեմ :

Պատվիրակներից մեկը : Բանվորների  
պետական ասպահովագրության սխտեմ  
Ամերիկայում չկա :

Կոյլ : Նահանգների մեծամասնության  
մեջ դոյություն ունի փոխհատուցում  
արտագրության մեջ պատահած դժ-  
բախտ դեպքերի - համար, ըստվորում  
վարձատրվում է աշխատունակության  
կորստյան մաքսիմում 30 տոկոսը : Այդ  
բանը դոյություն ունի նահանգների մե-  
ծամասնության մեջ : Վարձատրություն-  
նը տալիս են մասնավոր ֆիրմաները,  
վորոնց ձեռնարկություններում կորսվել  
է աշխատունակությունը, բայց որենքն  
այդպիսի վարձատրություն պահան-  
ջում է :

Ստալին : Ամերիկայում կա՞ պետա-  
կան ասպահովագրություն գործազրկու-  
թյունից :

Պատվիրակներից մեկը : Վո՛չ : Այն  
ֆոնդը, վոր ստեղծվում է գործազրկ-

կությունից ասպահովադրելու համար, կարող ե բավարարել 80-ից մինչև 100 հազար դործադուրկի բոլոր, նահանգներում :

Կոյլ : Կա ասպահովադրում (վոչ պետական) ինդուստրիալ դժբախտ դեպքերից, այսինքն՝ արտադրութայն մեջ պատահած դժբախտ դեպքերից : Բայց հիվանդութայն հետևանքով կամ ծերութայն հետևանքով առաջացած հաշմանդամությունը բնավ չի ասպահովադրվում : Ասպահովադրական Ֆոնդը կազմվում է բանվորների մուծումներից : Ըստ եյութայն դործը հանդում ե այն բանին, վոր ասպահովադրական Ֆոնդի այդ ամբողջ գումարն իրենք բանվորներն են վճարում, վորովհետև յեթե բանվորներն այդ Ֆոնդը չկազմեցին, նրանք բարձրագույն հավելում կտանային, իսկ քանի վոր այդ Ֆոնդը համաձայնեցված է լինում բանվորների ու ձեռնարկատերերի միջև, ուստի և բանվորներն ավելի պակաս հավելում

Լեն ստանում: Սա կաղմում է Ֆոնդի  
համարյա թե ամբողջ դումարը: Չեո-  
նարկատերերը փաստորեն մուծում են  
այդ Ֆոնդի չնչին մասը, մոտավորա-  
պես 10 տոկոսը:

Ստալին: Յես կարծում եմ, վոր բն-  
կերների համար հետաքրքրական կլինի,  
յեթե յես հաղորդեմ, վոր մեղանում  
ԽՍՀՄ մեջ բանվորներին պետության  
հաշվին ապահովադրելու վրա տարեկան  
800 միլիոն ռուբլուց ավելի յե ծախս-  
վում: Նույնպես ավելորդ չեք լինի հա-  
ղորդել ձեզ, վոր մեղանում բանվոր-  
ներն արդյունարերության բոլոր ճյու-  
ղերում, բացի սովորական դրամական  
աշխատավարձից, լրացուցիչ կերպով  
ստանում են մոտավորապես աշխատա-  
վարձի մեկ յերրորդը ապահովադրու-  
թյան, կենցաղի բարելավման, կուլ-  
տուրական կարիքների համար և այլն:

2-րդ ՀԱՐՑ: Ինչո՞վ բացատրել մաս-  
սայական բանվորական հատուկ կու-

սակցութեան բացակայութիւնը Հյուս-  
 Ամերիկայի Միացյալ Նահանգներում:  
 Բուրժուազիան Ամերիկայում ունի ամ-  
 բողջ յերկու կուսակցութիւն—հանրա-  
 սետական և դեմոկրատական, ամերի-  
 կյան բանվորները չունեն իրենց մաս-  
 սայական կուսակցութիւնը: Ընկերնե-  
 րը չեն դռնում արդշոք, վոր իր մաս-  
 սայական բանվորական կուսակցութեան  
 բացակայութիւնը, թեկուզ այնպիսի  
 կուսակցութեան, ինչպիսին Անգլիայումն  
 է (Լեյբուր Պարտի), թուլացնում է  
 բանվոր դասակարգի ուժը կապիտա-  
 լիստների դեմ մղած նրա քաղաքական  
 պայքարում: Այնուհետև, ինչո՞ւ բան-  
 վորական շարժման լիդերներն Ամերի-  
 կայում, Գրինը և ուրիշները, Ամերի-  
 կայում բանվորական կուսակցութիւն  
 ստեղծելուն վնասակամապես դեմ են ար-  
 տահայտում:

Բրոֆի: Այո՛, յեղեւ է լիդերների  
 այդպիսի վճիռ, վոր այդպիսի կուսակ-

ցուցիւնն ստեղծելու անհրաժեշտութիւնն չկա: Սակայն կա փոքրամասնութիւն, վորը դանձում է, վոր այդպիսի կուսակցութեան ստեղծումն անհրաժեշտ է: Այժմ Ամերիկայում որչեղտիվ պայմաններն այնպես են, վոր, ինչպես արդեն մատնանշվել է, արհարժումը Միացյալ Նահանգներում շատ է թուլ, իսկ արհարժման թուլութիւնն էլ, իր հերթին, բացատրվում է նրանով, վոր բանվոր դասակարգն առայժմ կազմակերպվելու և կապիտալիստներէ դեմ պայքարելու կարիք չունի այն բանի շնորհիվ, վոր կապիտալիստներն իրենք են բարձրացնում բանվորներէ աշխատավարձը, բավարար նյութական գրութիւնն են ասլահովում նրանց համար:

Ստալին: Ձե՞ք վոր գլխավորասպես վորակյալ բանվորներն են ասլահովում: Այստեղ հակասութիւն կա: Մի կողմից, դուրս է գալիս, վոր կազմակերպվածութեան անհրաժեշտութիւնն չկա, քանի վոր բանվորներն ասլահոված են.

մյուս կողմից, ասում են, թե՞ արհմիություններում կազմակերպված են հենց ամենից ավելի ապահովված, այսինքն՝ վորակյալ բանվորները։ յերբորդ կողմից, դուրս և գալիս, վոր արհմիություններում կազմակերպված, չեն հենց ամենից քիչ ապահովվածները, այսինքն՝ սակավորակները, վորոնք ամենից ավելի յեն կարիք զգում կազմակերպվածության։ Յես վոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ այդ։

Բրոֆի։ Այո՛, այստեղ հակասություն կա, բայց նույն կերպ հակասական և ամերիկյան իրականությունը քաղաքական ու տնտեսական տեսակետներից։

Բրեքներ։ Թեև անորակ բանվորները միություններում կազմակերպված չեն, բայց նրանք ձայնի քաղաքական իրավունք ունեն։ Այսպիսով՝ յեթե կան դժգոհության մոմենտներ, ապա անորակ բանվորներն այդ մոմենտներն արտահայտում են՝ ողտվելով, ձայնի իրենց քաղաքական իրավունքից։ Մյուս

կողմից, արհմիություններում գտնվող  
բանվորները, յեթե նրանք առանձնա-  
պես ծանր ժամանակ են սպրում, ուղար-  
վում են վո՛չ թե միությունից, այլ  
ձայնի քաղաքական իրավունքից: Այս-  
պիսով՝ ձայնի քաղաքական իրավուն-  
քով փոխհատուցվում է արհեստակցա-  
կան կողմակերպվածության բացակա-  
յությունը:

Իզրաելս: Հիմնական դժվարություն-  
ներից մեկն էլ ինքը սիստեմն է, Միա-  
նյալ նահանգների ընտրական սիստե-  
մը: Այնտեղ հանրապետության նախա-  
դահի ընտրությունների ժամանակ ա՛յն  
մարդը չի ընտրվում, ով ստանում է  
ամբողջ յերկրի ձայների մեծամասնու-  
թյունը կամ նույնիսկ վորևէ մի դա-  
սակարգի ձայների մեծամասնությունը:  
Այնտեղ յուրաքանչյուր նահանգում կան  
ընտրական կոլեգիաներ, յուրաքանչյուր  
նահանգ ունի վորոշ քանակով ձայներ,  
վորոնք մասնակցում են նախադահի  
ընտրությանը: Վորպեսզի նախադահն

ընտրված լինի, անհրաժեշտ է, վոր նա  
 հալաքի ձայները 51%-ը: Յեթե Յ—Ա  
 կուսակցութիւնն լինի, այն ժամանակ  
 իրերի այնպիսի դրութիւնն կստացվի,  
 վոր վոչ վոք չի ընտրվի, և ընտրու-  
 թիւնները պետք է կոնդրես փոխադր-  
 վեն: Ահա նա յե փաստարկ հանդիսա-  
 նում յերրորդ կուսակցութիւնն ստեղծ-  
 ման դեմ: Յերրորդ կուսակցութիւն  
 ստեղծելու հակառակորդներն այսպէս  
 են փաստարանում. յերրորդ թեկ-  
 նածու մի՛ առաջադրեք, վորովհետև  
 այդպիսով դուք կարոհեք լիբերալ կու-  
 սակցութիւնն ձայների թիվը և լիբերալ  
 կուսակցութիւնն թեկնածուին ընտրելու  
 հնարավորութիւնն չեք տա:

Ստալին: Սակայն սենատոր Լաֆոլետն  
 ստեղծել եր իր ժամանակին յերրորդ  
 շուրթուական կուսակցութիւնն: Բանից  
 դուրս է դալիս, վոր յերրորդ կուսակ-  
 ցութիւնը չի կարող ձայները արոհել,  
 յեթե բուրժուական կուսակցութիւնն է  
 նա, բայց կարող է ձայները արոհել,



յեթե նա բանվորական կուսակցություն  
լինի:

Դեվիլս: Յես չեմ գտնում, վոր նա-  
խորդ հռետորի մատնանչած փաստը  
հիմնական փաստ է: Ըստիս, հիմնական  
փաստը հետևյալն է: Վորպես որինակ  
յես տալիս եմ իմ քաղաքը, վորտեղ  
յես ապրում եմ: Ընտրությունների  
կամպանիայի ժամանակ դալիս ե այս-  
ինչ կուսակցության ներկայացուցիչը և  
արհեստակցական կազմակերպության  
գլխավորին մի վորևէ ստատսխանատու  
սաչտոն է տալիս, արհեստակցական  
կազմակերպության գլխավորին, ընտրա-  
կան կամպանիայի կապակցությամբ,  
վորոչ միջոցներ ե հանձնում, վո-  
րոնք նրա ոգտին են դնում, դրանից  
հետո նա վորոչ պրեստիժ է ստանում  
այն սաչտոնի կապակցությամբ, վոր  
նա ստանում է: Ստացվում ե իրերի  
այնպիսի դրություն, վոր արհմիու-  
թենական շարժման լիդերներն իրենք  
կամ այս կամ այն բուրժուական կու-

սակցութեան կողմնակիցներ են հանդի-  
սանում: Ուստի բնական է, վոր յերբ  
յերբորդ, բանվորական կուսակցութեան  
ստեղծելու վերաբերյալ խոսակցու-  
թյուններ են ծագում, արհմիութենա-  
կան շարժման այս լիդերներն այդպիսի  
կուսակցութեան ստեղծելու համար  
վռչնչի չեն ուզում ձեռնարկել: Ընդամին  
նրանք մատնանշում են այն հանգաման-  
քը, վոր յեթե յերբորդ կուսակցու-  
թյուն ստեղծվի, ապա արհմիութեան-  
ներում պառակտում կատացվի:

Դուզլաս: Այն, վոր արհմիութեան-  
ներում միայն վորակյալ բանվորներն  
են կազմակերպված, դիտավորապես  
նրանով և բացատրվում, վոր արհմիու-  
թեան մեջ կազմակերպված լինելու հա-  
մար պետք է ունենալ վորոչ ֆոնդ ու  
վորոչ ապահովութեան, վորովհետե  
անդամավճարները շատ մեծ են, և ա-  
նորակ բանվորները մուտքի բարձր  
վճար մուծելու հնարավորութեան չու-  
նեն: Բացի դրանից, անորակ բանվոր-

ները դանդաղում են մշտական սպառնալիքի տակ, Վոր յեթե իրենք վորձեն կաղմակերպվել, ապա ձեռնարկատերն իրենց դուրս կչարտի աշխատանքից: Անորակ բանվորները կարող են կաղմակերպվել վորակյալ բանվորների դործոն աջակցությամբ միայն: Այսպիսի աջակցություն նրանք մեծ մասամբ չեն ունենում: Ահա այս հանդամանքն անորակ բանվորների՝ արհմիություններում կաղմակերպվելու հիմնական խոչընդոտներից մեկն է: Բանվորական մասսաների կողմից իրենց իրավունքների հիմնական սլաշտպանությունն ընթանում է այդ իրավունքների քաղաքական սլաշտպանության դժով: Յես հենց սրա վրա յեմ հիմնում անորակ բանվորների կաղմակերպության բացահայտության զլխավոր պատճառը: Քաղաքական ու արհմիութենական բնադավառներում անորակ բանվորների կաղմակերպված չլինելու հիմնական մոմենտը յես ժնտեսական բազան եմ

համարում: Յես սկսաք և մատնանշեմ  
ամերիկյան ընտրական սխտեմի մի ա-  
ռանձնահատկությունը, ուղղակի ընտ-  
րությունները, վորտեղ ամեն մի մարդ  
կարող է ընտրական ժողով դալ ու ի-  
րեն հայտարարել զեմօրանս կամ հան-  
րապետական ու քվեարկել: Յես հավա-  
տագած եմ, վոր Գոմպերսը չէր կարո-  
ղանա բանվորներին սահել վոչ-քաղա-  
քական ծրարույ, յեթե նա չունենար  
ուղղակի ձայնավության ոգտին այս  
վաստարկը: Նա միշտ ասում եր բան-  
վորներին, վոր յեթե նրանք ցանկա-  
նում են քաղաքականապես դործել, ապա  
նրանք կարող են մտնել դոյություն  
ունեցող յերկու քաղաքական կուսակ-  
ցությունների մեջ և այնտեղ դրավել  
այս կամ այն սաշտոնը, այնտեղ իրենց  
համար հեղինակություն նվաճել: Այս  
վաստարկի ոգնությամբ Գոմպերսին  
հաջողվում եր բանվորներին հետ սա-  
հել բանվոր դասակարգը կաղմակերպե-

լու և բանվորական կուսակցութիւնն  
ստեղծելու դադարից :

3-րդ ՀԱՐՅ : Ինչո՞վ բացատրել, Վոր  
ԽՍՀՄ ճանաչման հարցում Աշխա-  
տանքի Ամերիկյան Ֆեդերացիայի լի-  
դերներն ավելի հետադեմ են, քան  
բուրժուաներից շատերը : Ինչո՞վ պետք  
է բացատրել, Վոր այնպիսի բուրժուա-  
ներ, ինչպես են պ. Բորահը և ու-  
րիշները, արտահայտվում են հողուտ  
ԽՍՀՄ ճանաչման, իսկ Ամերիկայի  
բանվորական շարժման լիդերները,  
Կոմպերսից սկսած մինչև Գրինը, մը-  
ղում եյին և շարունակում են մշել ա-  
մենահետադիմական պրոպագանդան  
բանվորական առաջին հանրապետու-  
թյան ճանաչման դեմ, ԽՍՀՄ ճա-  
նաչման դեմ : Ինչո՞վ բացատրել, Վոր  
նույնիսկ մի այնպիսի հետադեմը, ինչ-  
պես ամերիկյան նախկին նախագահ  
Վուդրո Վիլսոնն էր, հնարավոր էր  
գտնում «վողջունելու» Խորհրդային

Ռուսաստանին, իսկ Գրինն ու Աշխատանքի Մ.ճերիկյան Ֆեդերացիայի այլ լիդերները ցանկանում են ավելի հետադեմ լինել, քան կապիտալիստներն են: Ահա Վուդրո Վիլսոնի «վողջույնի» տեքստը, վոր 1918 թվի մարտին ուղարկվել էր Ռուսաստանի խորհուրդների համագումարի անունով, յերբ գերմանական կայզերի զորքերն արշավում էյին խորհրդային Լենինգրադի վրա.

«Ողտվելով խորհուրդների համագումարից՝ յես կողեյի Միացյալ Նահանգների Ժողովուրդների կողմից անկեղծ համակրանք արտահայտել ուս ժողովրդին, մանավանդ այժմ, յերբ Գերմանիան զինված ուժեր է շարժել յերկրի ներսը, վորսլեսոզի խանդարի ազատության համար՝ մղվող կովին, վոչնչացնի յերկրի բոլոր նվաճումները և իրականացնի գերմանական զխտավորություններն ու ուս ժո-

դովրդի անադատությունը: Թեև  
 Միացյալ Նահանգների հառաջա-  
 բուծյունը ներկայումս, ցավոք  
 սրտի, ի վիճակի չէ ցույց տալու  
 Ռուսաստանին այն անմիջական ա-  
 ջակցությունը, վոր նա ցանկանում  
 է ցույց տալ, յես կուզեյի ներկա  
 համադումարի միջոցով հավատաց-  
 նել ուս ժողովրդին, վոր Միա-  
 ցյալ Նահանգների հառաջաբու-  
 թյունը կողտադործի բոլոր հնա-  
 րավորությունները, վսրպեսզի  
 Ռուսաստանին նորից լիակատար  
 ինքնիշխանություն (СУВЕРЕНИТЕТ)  
 և նրա ներքին զործերում լիակա-  
 տար անկախություն ու այն մեծ  
 դերի լիակատար վերականգնումն  
 ապահովի, - վոր նա ունի Յեվրո-  
 պայի ու ժամանակակից մարդկու-  
 թյան կյանքում: Միացյալ Նա-  
 հանգների ժողովուրդն ամբողջ  
 սրտով համակրում է ուս ժողո-  
 վրդին՝ ինքնակալությունից ընդ-

ճիշտ ազատվելու և ինքն իր բախ-  
տի տնօրինողը դառնալու նրա  
ձգտման մեջ» (տե՛ս «Правда» №  
50, 1918 թվի մարտի 16) :

Կարելի՞ յե արդյոք նորմալ համա-  
րել, վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆե-  
դերացիայի լիդերները ցանկանում են  
ավելի հետադեմ լինել, քան հետադեմ  
Վիլսոնը :

Բրոֆի : Յես չեմ կարող պատճառնե-  
քը ճշգրիտ կերպով բացատրել, բայց  
յես՝ դտնում եմ, վոր հենց այնպես,  
ինչպես վոր Աշխատանքի Ամերիկյան  
Ֆեդերացիան Ամստերդամի Ինտերնա-  
ցիոնալի մեջ չի մտնում, նույն այդ  
պատճառներով ել Աշխատանքի Ամերի-  
կյան Ֆեդերացիայի լիդերները կանդ-  
նած են Ուորհրդային Ռուսաստանը  
չճանաչելու տեսակետի վրա : Տարբե-  
րությունն ամերիկյան բանվորների  
հատուկ վիլլիստիպայության մեջ  
ե և ամերիկյան ու յեվրոպական բան-



Վորները միջև գոյություն ունեցող  
անտեսական տարրերության մեջ:

Ստալին: Բայց Աշխատանքի Ամերի-  
կյան Ֆեդերացիայի լիդերները, վոր-  
քան ինձ հայտնի յե, չեն առարկում  
Իտալիայի կամ Լեհաստանի ճանաչման  
դեմ, վորտեղ Ֆաշիստներն են իշխում:

Բրոֆի: Իբրև որինակ մատնանչելով  
Լեհաստանն ու Իտալիան, վորտեղ Ֆա-  
շիստական կառավարություններ կան,  
չուք դրանով ել բացատրում եք Ամե-  
րիկայի կողմից ԽՍՀՄ-ը չճանաչելու  
պատճառը: Այդ անբարյացակամ վերա-  
բերմունքը դեպի ԽՍՀՄ-ը բացատրվում  
ե այն անախորժություններով, վոր  
ունեն ամերիկյան արհարժման լիդեր-  
ներն իրենց սեփական կոմունիստների  
հետ:

Դուրն: Այն պատճառը, վոր բերեց  
նախորդ հսկողությունը,—թե նրանք ինչպես  
կարող են ճանաչել ԽՍՀՄ-ը, յերբ  
նրանք անհամերաշխություն ունեն ի-  
րենց սեփական կոմունիստներին հետ,—

Համողիչ չե, -վորովհետև ԽՍՀՄ-ը չճա-  
 նաչելու վերաբերյալ քարոզը նրանց  
 մոտ մղվում էր դեռևս մինչև ամերի-  
 կյան, կոմկուսակցության կազմակեր-  
 պումը: Հիմնական պատճառն այն է,  
 վոր Աշխատանքի Մեթոդիկյան Ֆեդերա-  
 ցիայի լիդերները դեմ են ամեն մի  
 բանի, ինչ վոր նման է սոցիալիզմի:  
 Յեվ այս տեսակետից նրանց լարում են  
 կապիտալիստները, վորոնք ունեն «Աղ-  
 դային քաղաքացիական ասոցիացիա»  
 կոչվող մի կազմակերպություն, վորն  
 աշխատում է բոլոր միջոցներով ամ-  
 բողջ ամերիկյան հասարակությունը  
 լարել սոցիալիզմի դեմ՝ ինչ ձևով ու-  
 դում է այն լինի: Այդ կազմակերպու-  
 թյունը հանդես յեկավ Այլի Լիի բը-  
 նած դիրքի դեմ, վորը հանդես էր յե-  
 կել հանուն Մեթոդիկայի առևտրական  
 հարաբերությունների դարդացման  
 ԽՍՀՄ հետ: Այդ կազմակերպու-  
 թյան առաջնորդներն, ասում է յին. ել  
 ի՞նչպես կարող ենք մենք հսկել կարգ

ու կանոնին մեր բանվոր դասակարգի մեջ, յերբ լիբերալներն են սկսում այդպիսի խոսակցություններ ունենալ: «Ազդույին քաղաքացիական ասոցիացիան» մի խումբ կապիտալիստների կազմակերպությունն է, վորոնք խոչոք դումարով շիտղ են ներդրել այդ կազմակերպության մեջ և ղեկավարում են նրան: Հարկավոր է նշել, վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի նախագահի տեղակալ Մատյու Վոլլն այս հետադիմական ասոցիացիայի մեջ փոխ-նախագահ է:

Բրոֆի: Արհմիութենական առաջնորդների հետադիմականության վերաբերմամբ բերվող պատճառները հիմնական պատճառներ չեն. այս հարցի վրա ավելի խորը պետք է նայել: Ամերիկյան պատվիրակության ներկայությունը ԽՍՀՄ մեջ դեպի Խորհրդային Միությունը ամերիկյան բանվորների մի մասի տածած համակրական վերաբերմունքի լավագույն պատաս-

խանն ու ցուցանիչն և: Յես գտնուած  
եմ, վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆե-  
դերացիայի առաջնորդների կարծիքը  
ԽՍՀՄ նկատմամբ չի տարբերվում  
Ամերիկայի բանվոր դասակարգի մե-  
ծամասնության կարծիքից: Բանվոր  
դասակարգի մեծամասնության գիրքը  
ԽՍՀՄ նկատմամբ բացատրվում և  
ԽՍՀՄ հեռավորությամբ: Ամերիկա-  
յի բանվոր դասակարգն ամեն տեսակի  
միջազգային գործերով շահագրգռված  
չէ, իսկ բուրժուազիայի ազդեցությունն  
Ամերիկայի բանվոր դասակարգի վրա  
ուժեղ կերպով արտահայտվում և ԽՍՀՄ  
նկատմամբ նրա ունեցած վերաբեր-  
մունքի հարցում:

Պաշտպան Ռ. Մարտիրոսյան  
Տեխն. լամբ. Ս. խաչատրյան  
Սրբազրիչ Վ. Զիդեջյան.  
Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արովյան

---

Գլավլիտի լիազ. №6589, հրատ. № 552,

Պատվեր № 52, տիրաժ 5000

անձնված և արտ. 28/III 1938 թ.

Ստորագրված և տպագր. 15/IV 1938 թ.

Գինը 50 ~~դր.~~ ~~կոպ.~~ 1 ~~ա.~~ - 15 կոպ.

Պետհրատ—կուսակցական-քաղաքական

գրականության բաժնի տպարան

Յերևան, Սլավերդյան № 65

1871



331

8968

Пров.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0034588

A I  
1024